# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 39 (1789) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 22, 2016
VOLUME 36, NO. 39 (1789) SATURDAY, OCTOBER 22, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Ալիեւ Ղարաբաղին Կ՛առաջարկէ Ինքնավար Հանրապետութեան Կարգավիճակ

«Ինքնավար հանրապետութեան կարգավիճակն է առաւելագոյն փոխզիջումը Ղարաբաղի հարցով, որուն պատրաստ է այսօր Ատրպէյճանը», նման յայտարարութիւն ըրած է Իլհամ Ալիեւ ռուսական «Նովոստի» լրատուական գործակալութեան տուած ծաւալուն հարցազրոյցի մը ընթացքին, որուն մէջ անդրադարձած է Արեւմուտքի, Ռուսիոյ, Թուրքիոյ եւ Իրանի հետ յարաբերութիւններուն, իր անձնական յարաբերութիւններուն Փութինի հետ եւ բնականաբար, խօսած է Ղարաբաղի մասին, մասնաւորապէս ներկայացնելով, թէ ինչ ըսել է փոխզիջում Պաքուի համար:

«Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը չի քննարկուիր եւ չի կրնար քննարկման առարկայ դառնալ, մենք չենք համաձայնիր տրամադրել Ղարաբաղին անկախ կարգավիճակ եւ հայկական կողմը այս շատ լաւ գիտէ: Սակայն խելացի փոխզիջում հնարաւոր է՝ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան անվտանգութեան, կենսունակութեան, ինքնավարութեան ապահովումը, ինչպէս նաեւ ատրպէյճանական ներդրումային ծրագիրներու իրականացումը Ղարաբաղի մէջ: Ինչպէս նաեւ ազգերու խաղաղ գոյատեւումն այս տարածքին մէջ, մէկ պայմանով՝ որ Հայաստան ազատէ Ղարաբաղի շուրջ շրջանները»,- ըսած է Ալիեւ:

Ալիեւը անդրադարձած է նաեւ Ճոն Քերրիի ծանօթ յայտարարութեան, որուն մէջ Միացեալ Նահանգներու պետական քարտուղարը ըսած էր, որ ղարաբաղեան խնդրի կարգաւորման ժամանակը դեռ չէ եկած եւ որ ղարաբաղեան խնդիրը աւելի բարդ խնդիր է, քան նոյնիսկ պաղեստինա-իսրայէլական խնդիրը: Ատրպէյճանի նախագահի պնդմամբ՝ Քերրիի այս յայտարարութիւնը ամբողջովին կը հակասէ Ամերիկայի նախագահի դիրքորոշման եւ այս յայտարարութեամբ Քերրին հակամարտութեան շուրջ բանակցութիւնները երկարաձգելու ազդանշան կ՛ուղարկէ Հայաստանին:

Մեկնաբանելով ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման վերաբերեալ Իլհամ Ալիեւի վերոյիշեալ յայտարարութիւնները, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար Տիգրան Բալայեանը ըսաւ,- «Աւելի լաւ կը լինէր, որ Ատրպէյճանի ղեկավարութիւնը ինքնախաբէութեամբ չզբաղուէր եւ թոզ չփչէր ատրպէյճանական հասարակութեան աչքերին: Մէկ շաբաթ առաջ Ատրպէյճանի ղեկավարը արդէն հրապարակաւ խոստովանել էր բանակցութիւնների իրական բովանդակութեան մասին, նշելով, որ Պաքուին հորդորում են ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը»,- շեշտեց Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակը:

## Ֆրանսայի Ծերակոյտը Հաստատեց Ցեղասպանութեան Ժխտումը Քրէականացնող Օրինագիծը



Ֆրանսայի Ծերակոյտի Հոկտեմբեր 14-ի նիստի ընթացքին քննարկման եւ ապա քուէարկութեան դրուեցաւ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը, որ ընդունուեցաւ 156 կողմ եւ 146 դէմ ձայնով:

Ֆրանսայի խորհրդարանի ստորին պալատի՝ Ազգային ժողովի պատգամաւորները, Յուլիսին միաձայն կողմ քուէարկած էին «Հաւասարութիւն եւ քաղաքացիութիւն» կոչուող օրինագիծի փոփոխութիւններուն, որով պատիժ կը սահմանուի մարդկութեան դէմ գործուած բոլոր յանցագործութիւնները, որոնց շարքին՝ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտելու եւ հերքելու համար:

Կային պատգամաւորներ, որոնք կը կարծէին, որ ընդհանուր օրէնքէն պէտք է բեկանուի Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելու մասին դրոյթը, սակայն հայկական համայնքը աշխատանք տարաւ եւ հասաւ անոր, որ Ծերակոյտի քննարկման ներկայացուի նաեւ այն տարբերակը, որ ամռան ընդունուած էր Ստորին պալատին կողմէ՝ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող դրոյթը ներառուած:

Քուէարկութենէն ետք, Ֆրանսային Ծերակոյտի անդամ Ֆիլիպ Կանտելբակ իր ուրախութիւնը յայտնեց վերոյիշեալ յօդուածի ընդունման առթիւ. - «Ես շատ գոհ եմ, որ Ծերակոյտը լայն մեծամասնութեամբ ընդունեց յօդուածը՝ կողմ դնելով քաղաքական տարբերութիւնները: Այսուհետեւ պատիժը կը վերաբերի բոլոր ցեղասպանութիւններուն: Այս շատ կարեւոր քայլ է՝ պատժելու համար բոլոր ժխտողականներուն եւ յատկապէս անոնց, որոնք կը ժխտեն 1915 Թուականի հայերու ցեղասպանութիւնը: Այս քայլով Ֆրանսան շատ կարեւոր ուղերձ կը յղէ աշխարհին այն ժամանակ, երբ մասսայական ոճիրներ կը գործուին Միջին Արեւելքի մէջ եւ այլուր»:

Այս առթիւ Հայաստան ողջունեց Ծերակոյտի որոշումը: «Ողջունում ենք Ֆրանսիայի Սենետի կողմից դեռ ամռանը Ազգային ժողովում հաստատուած՝ Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագծի ընդունումը», - յայտարարեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան:

«Այս քայլով Ֆրանսիան կրկին անգամ վերահաստատում է իր արժէքաւոր դերակատարումը անցեալում իրականացուած ցեղասպանութիւնների դատապարտման եւ ժխտողականութեան դէմ պայքարի, ինչպէս նաեւ՝ մարդկութեան դէմ հնարաւոր նոր ոճիրների կանխարգելման գործում», - ըսուած էր Նալբանդեանի յայտարարութեան մէջ:

Այժմ, ընդունուած օրէնքի մասին իր կարծիքը պէտք է յայտնէ նաեւ Ֆրանսայի Սահմանադրական Դատարանը:

## Հայ Աւետարանական Եկեղեցւոյ 170-Ամեակի Տօնակատարութիւնը



Տեսարան՝ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 170-ամեակի տօնակատարութենէն

Կիրակի, Հոկտեմբեր 16-ի երեկոյեան նշուեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 170-ամեակը: Այս առթիւ կազմակերպուած տօնակատարութեան ընթացքին ներկայացուեցաւ բարձրորակ սրբազան համերգ:

Լոս Անճելըսի Հայ Աւետարանական Միացեալ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած արարողութեան ներկայ էին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ տարբեր շրջաններու հովիւներ, Արեւմտեան Ամերիկայի Թեմի Առաջնորդ՝ Տէր Յովնան Արք. Յովսէփեանի ներկայացուցիչ Տէր Արշակ Խաչատուրեանը, Հայ քաղաքական կուսակցութիւններու եւ այլ կազմակերպութիւններու

Շար.ը էջ 8

## ԳՈՅԺ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը խոր ցաւով կը գուժէ վաղահաս եւ անակնկալ մահը, իր երիտասարդ անդամին՝ Ընկեր ԿԵՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ, որ պատահեցաւ Հոկտեմբեր 13-ին, Լաս Վեկասի մէջ:

Ընկերոջ Տան Կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 20 Հոկտեմբեր 2016-ին, Վէն Նայսի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 7:00-ին: Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 21 Հոկտեմբերի կ.ե. ժամը 1:30-ին Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ մէջ, ապա թաղումը պիտի կատարուի Հոլիվուտ Հիլզի Ֆորեսթ Լոն գերեզմանատան մէջ:

ՍԴՀԿ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

# Երեւանեան Հաւաքն Ու Կոռեկտութեան Ջնջուած Սահմանները

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

*Անցեալ շաբաթ Երեւանում կայացաւ ՀԱՊԿ Հաւաքական անվտանգութեան խորհրդի նստաշրջանը, որին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեց նաեւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փութինը: Երեւան էին ժամանել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը եւ Ղրղըզստանի նախագահ Ալմազբեկ Աթամբաեւը: Իսկ Ղազախստանը, ի տարբերութիւն ՀԱՊԿ անդամ միւս երկրների, ներկայացուած չէ նախագահի մակարդակով: Նուրսուլթան Նազարբաեւի փոխարէն Հայաստան էր ժամանել Ղազախստանի վարչապետ Բակիջան Սագինտաեւը: Ինչպես աւելի վաղ յայտնել էր այդ երկրի նախագահի աշխատակազմը, Նազարբաեւը առողջական խնդիրներ ունի, ինչը, սակայն, որոշ վերլուծաբաններ կասկածի տակ էին դրել՝ չբացառելով, թէ հիւանդութիւնը ընդամէնը պատրուակ է Հայաստան կատարելիք այցից խուսափելու համար:*

*Նիստի օրակարգային հարցերից մէկը ՀԱՊԿ գլխաւոր նոր քարտուղարի հաստատումն էր: Այդ պաշտօնում, ըստ ռոտացիոն կարգի, պէտք է նշանակուեր Հայաստանի ներկայացուցիչը: Սակայն ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը յայտարարեց, թէ այդ հարցը օրակարգից դուրս է եւ կը քննարկուի տարեվերջին՝ Ռուսաստանում:*

*ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի նշանակումից բացի, սպասւում էր, որ նիստի ընթացքում երկրների ղեկավարները կ՚ընդունեն «Մինչեւ 2025թ. ՀԱՊԿ հաւաքական անվտանգութեան ռազմավարութիւն»ը, նաեւ յայտարարութիւններ կ՚ընդունեն «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման», ինչպես նաեւ հակահրթիռային պաշտպանութեան վերաբերեալ: Աւելի վաղ Հայաստանի ԱԳՆ-ն տեղեկացրել էր, որ ՀԱՊԿ պետութիւնների արտգործնախարարների խորհրդի նիստում հաւանութիւն է տրուել անվտանգութեան խորհրդի նիստին ներկայացուելիք «Մինչեւ 2025թ. ՀԱՊԿ հաւաքական անվտանգութեան ռազմավարութեանը», Հաւաքական անվտանգութեան խորհրդի նստաշրջանի եզրափակիչ յայտարարութեանը, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման», ինչպէս նաեւ հակահրթիռային պաշտպանութեան վերաբերեալ յայտարարութիւնները: Սակայն ռուսաստանեան ՏԱՍՍ լրատուական գործակալութիւնը, վկայակոչելով Կրեմլի խօսնակ Դմիտրի Պեսկովին, յայտնեց, որ ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարները Լեռնային Ղարաբաղի հարցով յայտարարութիւն չեն ընդունի: «Ոչ, այսօր ոչ», - լրագրողների հետ զրոյցում ասել էր Պեսկովը:*

*Սակայն պարզուեց, որ այնուամենայնիւ, ԼՂ խնդրի վերաբերեալ յայտարարութիւն, այնուամենայնիւ, ընդունուել է, որում աջակցութիւն են յայտնել Մայիսի 16-ն Վիեննայում եւ Յունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում կայացած գագաթնաժողովների ժամանակ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններին, որոնք ուղղուած են հակամարտութեան գօտում իրավիճակի սրման կանխմանը, իրավիճակի կայունացմանը եւ խաղաղ կարգաւորման գործընթացն առաջ մղելու պայմանների ստեղծմանը:*

*Յիշեցնենք, անցած տարի Դեկտեմբերին Սերժ Սարգսեանը Մոսկուայում սուր քննադատութեան ենթարկեց ՀԱՊԿ-ին՝ ընդգծելով. - «Ամէն անգամ, երբ Ատրպէյճանի զինուած ուժերը Հայաստանի դէմ կիրառում են ավտոմատներ, ականանետեր եւ հրետանային սարքաւորումներ, նրանք կրակում են Աստանայի, Դուշանբեի եւ Բիշքեկի, Մոսկուայի եւ Մինսկի ուղղութեամբ: Յիշեցնեմ, որ մենք կանոնադրութեան մէջ ունենք համապատասխան յօդուած: Եւ եթէ մենք ոչ միայն չենք կիրառում այդ յօդուածը, չենք քննարկում ստեղծուած իրավիճակը, հարկ չենք համարում վերցնել լսափողը եւ հետաքրքրուել՝ ինչ է կատարւում դաշնակից Հայաստանում, ապա մենք պարզապէս այդ կրակոցների տակ ենք դնում մեր ամբողջ կազմակերպութիւնը, նրա հեղինակութիւնը, նրա կարեւորութիւնը»:*

*Ուշագրաւ է, որ Հայաստանում ԼՂ-ի խնդրին է անդրադարձել է նաեւ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լաւրովը: Նա ասել է, թէ Թուրքիան կարող է դրական դերակատարութիւն ունենալ ղարաբաղեան խնդրի կարգաւորման հարցում: «Այն, որ Թուրքիան կարող է դրական դերակատարութիւն ունենալ՝ ապահովելով Ղարաբաղի ապաշրջափակումը, նորմալ տնտեսական համագործակցութիւնը տարածաշրջանում, սա շատ կարեւոր գործօն է, որը մենք միշտ հաշուի ենք առնում», - ասել է Լաւրովն, ապա յաւելել, որ եթէ յանկարծ Թուրքիան եւ Հայաստանը վերադառնան իրենց պայմանաւորուածութիւնների կատարմանը, չկապելով այդ գործընթացը ղարաբաղեան հակամարտութեան հետ, իրենք միայն ուրախ կը լինեն: «Բայց մեր տպաւորութեամբ, ԼՂ խնդրում առաջընթացը առանցքային է հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման համար», - ասել է Լաւրովը:*

*Ստացւում է, Երեւանում հերթական անարդիւնք հաւաքն անցկացուեց, կարծես, ամէն ինչ արուեց, որպեսզի Հայաստանում անցկացուած հանդիպումը աննկատ անցկացուի: Սա դեռ ամէն չէ: ՀԱՊԿ Հաւաքական անվտանգութեան խորհրդի նստաշրջանի վերաբերեալ ռուսաստանեան մամուլի հրապարակումները դուրս են կոռեկտութիւնից եւ բացարձակ սանձարձակ են:*

*Նախ, թէ՛ հայաստանցի, թէ՛ ռուսաստանցի լրագրողները նկատել են նաեւ, որ երէկուայ հաւաքը գրեթէ ամբողջովին փակ էր լրագրողների համար, ինչն աննախադէպ է նոյնիսկ այս կազմակերպութեան համար: Օրինակ, ինչպէս կարելի է բացատրել նմանօրինակ մոտքերով հրապարակումը՝ ռուսաստանեան մամուլում՝ «Սերժ Սարգսեանը ինչ-որ բան էր քրթմնջում...»:*

*ՀԱՊԿ երեւանեան գագաթնաժողովի մասին ռուսաստանեան «Մոսկովսկի Կոմսոմոլեց» թերթը գրում է. «Յայտնի հանգամանքների պատճառով Հայաստանը ՀԱՊԿ անդամ պետութիւնների ղեկավարների համար ամենահարմար վայրը չէ: Նոյնիսկ, եթէ չեն անում բարձր յայտարարութիւններ, միայն Հայաստանում հաւաքուելու փաստը արդէն լի է Թուրքիայի եւ Ատրպէյճանի հետ յարաբերութիւնները վատացնելու վտանգով, իսկ այս երկու պետութիւնները ՀԱՊԿ անդամ Հայաստանը չհաշուած՝ միւս բոլոր*

Շար.ը էջ 18

# Տագնապ Կարէն Կարապետեանի Համար

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*ՀՀԿ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը յայտարարել է, որ կապի ու տրանսպորտի նախկին նախարար Գագիկ Բեգլարեանի տեղը ՀՀԿ-ում շատ ամուր է: Նա այդպէս պատասխանել է լրագրողների հարցին, թէ իրականութիւ՞ն է արդեօք, որ Բեգլարեանը պատրաստւում է հեռանալ ու ստեղծել նոր կուսակցութիւն:*

*Վահրամ Բաղդասարեանը փաստօրէն տագնապ է ազդարարում նոր վարչապետ Կարէն Կարապետեանի համար, որի նշանակումից յետոյ կառավարութիւնից հեռացուեց Գագիկ Բեգլարեանն, ու նրա տեղը զբաղեցրեց Կարէն Կարապետեանի վստահելի անձանց «տեխնոկրատ» թիմի ներկայացուցիչը:*

*Գագիկ Բեգլարեանը Հայաստանի իշխող համակարգի նշանային ֆիգուրներից է: Նա պարզապէս անձ չէ համակարգում, այլ ենթահամակարգ: Հայաստանի իշխող քրէա-օլիգարխիկ համակարգն ունի իր ենթահամակարգերը եւ իշխանութեան մի շարք ներկայացուցիչներ պարզապէս անձինք չեն, այլ այդպիսի ենթահամակարգերի ղեկավարներ եւ խորհրդանիշեր: Գագիկ Բեգլարեանը դասւում է այդ անձանց շարքում: Հետեւաբար, երբ խօսւում է նրա դիրքերի ամրութեան մասին, դա ինքնաբերաբար նշանակում է քրէա-օլիգարխիկ համակարգի դիրքերի ամրութիւն:*

*Վահրամ Բաղդասարեանի ազդակը հենց դա է, քանի որ հազիւ թէ Գագիկ Բեգլարեանը զուտ իբրեւ անձ իր ճակատագրով մտահոգեր Բաղդասարեանին այնքան, որ նա մամուլում աւետեր Բեգլարեանի ՀՀԿ-ական դիրքերի ամրութեան մասին: Բաղդասարեանն այդպիսով աւետում է նաեւ սեփական, եւ ընդհանրապէս քրէա-օլիգարխիայի դիրքերի ամրութեան մասին:*

*Այստեղ է յայտարարութեան բուն շարժառիթն ու շահագրգռութիւնը:*

*Իսկ եթէ այդ դիրքերը ՀՀԿ-ում ամուր են, դա նշանակում է, որ իրավիճակը տագնապալի է Կարէն Կարապետեանի համար: Որովհետեւ քանի դեռ ՀՀԿ-ում ամուր է քրէա-օլիգարխիայի դիրքը, նշանակում է, որ Կարէն Կարապետեանի դիրքը լինելու է բաւական թոյլ ու երերուն, եւ սկզբունքօրէն նշանակութիւն չունի, որ քրէա-օլիգարխիան զիջել է տեղը կառավարութիւնում:*

*Մի կողմ թողնենք այն, թէ ինչքանով է անկեղծ տնտեսական համակարգային փոփոխութիւն առաջացնելու Կարէն Կարապետեանի ցանկութիւնը: Եւ ինչ փոփոխութիւն է պատկերացնում նա եւ նրա թիմն ընդհանրապէս:*

*Կայ մի խօսուն հանգամանք. նրա կառավարութիւն են եկել մարդիկ, որոնք բաւական յարմարաւէտ գործունէութիւն են ծաւալել մասնաւոր հատուածում, բարձր կառավարչական պաշտօններում, չունեն անձնական բարեկեցութեան, փողի, ինքնահաստատման խնդիր, չեն եղել քաղաքականութեան մէջ եւ կարծես թէ թաթախուած չեն եղել տարբեր ինտրիգների ու խարդաւանքների մէջ:*

*Այդ անձինք թողել են յարմարաւէտ միջավայրը եւ ստանձնել մի կարգավիճակ, որը նրանց դարձնում է հանրայնօրէն պատասխանատու, դնում հասարակական աչալուրջ հայեացքի տակ, երբ ամէն քայլը կարող է դառնալ խիստ քննադատութեան առարկայ:*

*Այդ մարդիկ բաւական հասուն ու կայացած են այդ ռիսկը գիտակցելու համար: Եւ հետեւաբար, եթէ գնացել են դրան, կը նշանակի, որ գնացել են ինչ որ բան փոխելու հաստատակամութեամբ, ինչ որ մէկը համոզել է նրանց, որ կը լինի փոխելու հնարաւորութիւն:*

*Այդ հանգամանքը չպէտք է դուրս մնա ուշադրութիւնից, իրավիճակը գնահատելու համատեքստում:*

*Միաժամանակ աներկբայ է,*

Շար.ը էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Հայաստանի Կառավարութեան Նոր Ծրագիրն Ընդունուեց

*Հայաստանի կառավարութիւնը ընդունեց յառաջիկայ 6 ամսուայ գործունէութեան ծրագիրը, որը կը ներկայացուի Ազգային ժողովի դատին:*

*Կարէն Կարապետեանի կառավարութիւնն իր մարտահրաւէրն է համարում բարեփոխումների իրագործումը՝ ապահովելով քաղաքացու պաշտպանուածութիւնը, կենսամակարդակի բարձրացումը, լաւատեսութիւնն ապագայի նկատմամբ:*

*«Ծրագիրը չեշտադրում է այն գաղափարը, որ հարկ է րոպէ առաջ իրագործել բարեփոխումներ՝ այդ գործում ներգրաւելով Հայաստանի եւ հայութեան ամբողջ ներուժը», - կառավարութեան արտահերթ նիստում յայտարարեց փոխվարչապետ Վաչէ Գաբրիէլեանը՝ ծրագիրը ներկայացնելով գործադիրի դատին:*

*«Մենք ձեւակերպել ենք, իմ կարծիքով, բաւականին հետաքրքիր ծանրաձող, որը բարձրացնելու համար պէտք է մենք կոնցենտրացնենք մեր ամբողջ ներուժը: Բոլորին առաջադրանք՝ յատուկ ուշադրութիւն դարձնել ծրագրի իրականացմանը», - իր հերթին յայտարարեց վարչապետ Կարէն Կարապետեանը:*



Վարչապետ
Կարէն Կարապետեան

*Ծրագրում կառավարութիւնն իր ռազմավարական խնդիրն է հռչակում Հայաստանի եւ Ղարաբաղի անվտանգութեան ապահովումը, պետական կառավարման համակարգի արդիականացումը, ժողովրդավարական ինստիտուտների հետագայ զարգացումը, ընտրական համակարգի նկատմամբ վստահութեան աւելացումը, կոռուպցիայի եւ ստուերի դէմ համակարգուած պայքարի ուժեղացումը, աղքատութեան դէմ պայքարը, գործազրկութեան կրճատումը եւ միջին խաւի ընդլայնումը, հաւասար եւ արդար պայմանների ապահովումը աւելացուած արժէք ստեղծողների համար, ներդրումային գրաւչութեան բարձրացումը, առողջապահութեան եւ կրթութեան ոլորտներում որակական աճի ապահովումը:*

*Արտաքին քաղաքական առաջնային հարցերն են ղարաբաղեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորումը, Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցութեան եւ ռազմավարական յարաբերութիւնների առաւել խորացումն ու ընդլայնումը, ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերութեան ամրապնդմանը, ԵՏՄ-ի շրջանակներում համագործակցութեան հետագայ զարգացումը:*

### Ընդդիմադիրները Բարձրաձայնում Են Միասնական Ճակատով Հանդէս Գալու Անհրաժեշտութեան Մասին

*Խորհրդարանական ընտրութիւններից մօտ կէս տարի առաջ ընդդիմադիր ուժերը բարձրաձայնում են միասնական ճակատով իշխանութիւնների դէմ դուրս գալու անհրաժեշտութեան մասին:*

*Գիւմրիի եւ Վանաձորի ընտրութիւններին չմասնակցած «Ժառանգութիւն»-ը հակուած է առաջադրուել 2017-ին, բայց քուէարկութիւնն աւելի շատ օգտագործելու է որպէս քաղաքական առիթ:*

*«Այդ օրը պէտք է պատրաստ լինենք, որովհետեւ դա հիմնական մարտի օրն է լինելու, եթէ իրենց այս սցենարով է ամէն ինչ տեղաշարժուելու, եւ նաեւ դրանից յետոյ պէտք է պատրաստ լինենք նաեւ այդ՝ այսպէս կոչուած ընտրութիւնների, իսկ իրականում իրենց կողմից տեղի ունեցող յարձակման յաջորդ օրուան: Եւ սա իրենից ենթադրում է լայնածաւալ կազմակերպչական աշխատանք», - «Ազատութեան» հետ զրոյցում նշեց «Ժառանգութեան» պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը:*

*«Ժառանգութիւնն» առայժմ բանակցութիւններ չի վարում ընդդիմադիր այլ ուժերի հետ: Զարուհի Փոստանջեանի կարծիքով, միաւորման համար կարեւոր նախապայման է՝ բացառել տարածքների զիջումը Ատրպէյճանին:*

*Հայ Ազգային Կոնգրէսը մտադիր է առաջարկել հեղինակաւոր քաղաքական ու հանրային գործիչներին՝ կուսակցութեան անունից առաջադրուել 13 ընտրատարածքներում, որտեղ, ըստ էութեան, մեծամասնական թեկնածուներ են լինելու: Բացի այդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած կոնգրէսը դէմ չէ նաեւ ընտրութիւններին դաշինքով մասնակցելուն:*

*«Ժողովրդավարութիւն հաստատող, Հայաստանը զարգացման ուղու վրայ դնելու նպատակներին հաւատարիմ դաշինք. հիմնական մտադրութիւնը պէտք է լինի հենց այդ ծանրակշիռ բեւեռի ստեղծումը: Մենք աշխատում ենք այդ ուղղութեամբ՝ փորձենք համատեղել ջանքերը», - նշեց ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:*

*«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը նախաձեռնում է արեւմտեան կողմնորոշում ունեցող ուժերի դաշինք՝ միասին ընտրապայքարի դուրս գալու համար:*

*Ընդդիմադիր գործիչն առայժմ չի բացում փակագծերը, թէ որ կուսակցութիւնների հետ է բանակցում, քանի դեռ անգամ նախնական համաձայնութիւն չկայ միասնական ցուցակի շուրջ: Արամ Սարգսեանը, սակայն, արդէն իսկ բացառում է «Բարգաւաճ Հայաստան», «Հայկական վերածնունդ» եւ Դաշնակցութիւն կուսակցութիւնների հետ համագործակցութիւնը՝ համարելով նրանց Մարտի 1-ի համար պատասխանատուներ:*

*Ընտրութիւններին դաշինքով չի մասնակցելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը, որը որոշում ունի սեփական ցուցակով դուրս գալ ընտրապայքարի: ՔՊ ղեկավար անդամ է Նիկոլ Փաշինեանը:*

### Լեւոն Տէր-Պետրոսեանը Երկու Առաջարկ Ունի Վարչապետ Կարապետեանին

*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը* ilur.am *կայքում հանդէս է եկել նոր կառավարութեանն ուղղուած առաջարկութիւններով:*

*«Կասկած չունենալով, որ Կարէն Կարապետեանը վարչապետի պաշտօնն ստանձնել է երկրի տնտեսական վիճակն առողջացնելու ազնիւ մղումով, կարծում եմ, որ նա առաջին հերթին պէտք է նկատի ունենայ հետեւեալ անժխտելի իրողութիւնը:*

*Հայաստանի բոլոր չարիքների՝ սոցիալական ծանրագոյն վիճակի, բնակչութեան աղքատութեան, զանգուածային արտագաղթի, բանակի թերզինուածութեան, ապօրինի ընտրութիւնների, արդարադատութեան չգոյութեան, ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների ոտնահարման արմատը կոռուպցիան է՝ պետական պաշտօնեաների կողմից ազգային հարստութեան համատարած ու անյագ թալանը:*

*Ուստի կառավարութեան առջեւ կանգնած ամենահրատապ խնդիրը պէտք է լինի կոռուպցիայի դէմ պայքարի ոչ թէ ձեւական, այլ յիրաւի արդիւնաւէտ մեխանիզմների կիրառումը, ինչի համար անհրաժեշտ է.*

*1. Վերացնել նախարարութիւնների, պետական այլեւայլ գերատեսչութիւնների, ինչպէս եւ տեղական ինքնակառավարման մարմինների արտաբիւջետային հաշիներն ու հիմնադրամները:*

*2. Անմիջապէս վաւերացնել ՄԱԿ-ի Հակակոռուպցիոն կոնվենցիայի՝ պետական պաշտօնեաների ապօրինի հարստացմանը վերաբերող 20-րդ յօդուածը»:*



Հայաստանի առաջին նախագահ
Լեւոն Տէր-Պետրոսեան

*Ըստ Տէր-Պետրոսեանի, եթէ կառավարութեան ծրագրում այս երկու դրոյթները չընդգրկուեն, ապա Հայաստանի տնտեսական վիճակի բարելաւման ու զարգացման յոյս փայփայելն անիմաստ կը դառնայ, իսկ նոր կառավարութիւնը կ՚արժանանայ նախորդ երկուսի բախտին:*

*«Այս առաջարկները թէեւ նորութիւն չեն ու բազմիցս արծարծուել են, բայց մինչ այժմ մնացել են «ձայն բարբառոյ յանապատի»:*

*Մինչեւ Հայաստանում կոռուպցիան արմատախիլ չարուի, ոչ մի վարչապետ, որքան էլ կարող, որեւէ յաջողութեան չի հասնի եւ կարճ ժամանակ անց կը դառնայ հերթական քաւութեան նոխազը», - գրել է Լեւոն Տէր-Պետրոսեանը:*

### ԸՕ-ի Փոփոխութիւնների Օրինագիծն Ընդունուեց Առաջին Ընթերցմամբ

*Քննադատելով ու անթոյլատրելի համարելով մի շարք դրոյթներ՝ ընդդիմադիրներն կողմ քուէարկեցին Ընտրական օրէնսգքրի փոփոխութիւնների նախագծին՝ իշխանութիւններից պահանջելով մինչեւ երկրորդ ընթերցմամբ քուէարկութիւնը, շտկել փաստաթուղթը:*

*Ընդդիմութեան վերջին 15 տարիների ամենագլխաւոր պահանջը՝ ընտրութիւններին մասնակցած անձանց ցուցակների հրապարակումը նախագծում առկայ է: Խորհրդարանական փոքրամասնութեանը, սակայն, մտահոգում է ընտրակեղծարարութեան մասին ոչ ճիշդ ահազանգերի քրէականացումը:*

*ՀԱԿ պատգամաւոր Գագիկ Ջհանգիրեանը յայտարարեց, թէ նախագիծը չի տարանջատում միտումնաւոր եւ անզգուշութեամբ արուած կեղծ յայտարարութիւնները, ինչը, ըստ նախկին զինդատախազի, անընդունելի է. - «Այսինքն մենք սուտ մատնութեան կամ սուտ ցուցմունք տալու նոյն նորմը կիրառում ենք աւելի պարզեցուած՝ նաեւ անզգոյշ մեղքի պայմաններում, ինչը անընդունելի է քրէական իրաւունքում եւ պրակտիկայում: Էս խնդիրը, եթէ համաձայնութեան կը գան, բոլորին կոչ կ՚անեմ կողմ քուէարկել»:*

### «Ժողովուրդ». ՀՀԿ-ականները Հեգնել Են Կարէն Կարապետեանին, Նա Էլ Կտրուկ Պատասխանել Է

*«Ժողովուրդ» թերթը գրում է. «ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանի գլխաւորած նոր կառավարութիւնը մինչեւ Հոկտեմբերի 23-ը խորհրդարանի հաստատմանը պէտք է ներկայացնի իր ծրագիրը: տեղի ունեցած ՀՀԿ ԳՄ նիստում արդէն իսկ քննարկուել է ծրագրի նախագիծը:*

*«Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ ՀՀԿ-ականները, որոնք նոր վարչապետին իրենց թիմի անդամ չեն ընկալում, պարբերաբար հեգնել են Կարէն Կարապետեանին: Իսկ երբ վարչապետն ասել է, որ իրենք նախատեսում են գազի սակագինը նուազեցնել, Վարդան Այվազեանը նրան հակադարձել է, թէ սակագին իջեցնել կամ բարձրացնելը կառավարութեան գործառոյթների մէջ չի մտնում, ինչին հետեւել է Կարէն Կարապետեանի կտրուկ պատասխանը, որ ինքը շատ լաւ գիտի, թէ կառավարութեան լիազօրութիւնները որոնք են:*

*Ենթադրւում է, որ կառավարութեան ծրագիրը ԱԺ կը ներկայացուի երկուշաբթի առաւօտեան՝ Հոկտեմբերի 24-ին: Խորհրդարանը նոր կառավարութեան ծրագիրը պէտք է քննարկի եւ որոշում կայացնի հինգօրեայ ժամկէտում: «Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ կառավարութեան ծրագիրը քննարկելու նպատակով եկող Չորեքշաբթի ԱԺ արտահերթ նիստ կը հրաւիրուի»:*

# ԼՈՒՐԵՐ

## Foreign Affairs.- «Հարաւային Կովկասը Կ՛ապասառեցուի»



«Հարաւային Կովկասը կ՛ապասառեցուի»՝ այսպէս վերնագրեց միջազգային յարաբերութիւններու վերլուծմամբ զբաղող Foreign Affairs հեղինակաւոր հանդէսը տարածաշրջանին նուիրուած իր հրապարակումը: Յօդուածի հեղինակը Ուաշինկթընի մէջ գործող Ռազմավարական եւ միջազգային հետազօտութիւններու կեդրոնի Ռուսիոյ եւ Եւրասիոյ ծրագրերու գծով փոխտնօրէն Ճեֆրի Մանկոֆն է:

Ամերիկացի վերլուծաբանի համոզմամբ՝ վերջին ամիսներուն Հարաւային Կովկասի մէջ զգալի փոփոխութիւններ տեղի կ՛ունենան, որոնց ամենառարկայական վկայութիւնը ապրիլեան պատերազմն էր:

«Ապրիլին բռնութիւնները հասան մակարդակի մը, որ աննախադէպ էր 90-ականներէն ի վեր: Հակամարտութեան սկիզբը ատրպէյճանական ուժերու կողմէ շփման գծի երկայնքով իրականացուած յարձակումն էր: Ատրպէյճանական կողմը, ճիշդ է, կը յայտարարէր, թէ հակադարձած է հայկական ուժերու սադրանքներուն»,- կը նշէ ամերիկացի փորձագէտը՝ աւելցնելով, որ ատրպէյճանցիներու կողմէ հայկական մի քանի յենակէտերու գրաւումը «սահմանափակ ռազմավարական կարեւորութիւն ունէր»:

«Ռազմական գործողութիւնները կը նախազգուշացնէին առ այն, որ վերջին երկու տասնամեակներու համեմատական անդորրը կրնայ յարատեւ չ՛ըլլալ: Տեղի ունեցածը նախեւառաջ վկայեց, որ տարածքային փոփոխութիւններու կարելի է նաեւ ուժով հասնիլ»,- կը նշէ Foreign Affairs-ի յօդուածագիրը:

Ճեֆրի Մանկոֆի կարծիքով, Ատրպէյճանը կրնայ յառաջիկայ ամիսներուն շարունակել օգտագործել երկրին մէջ ծագած ազգայնական ալիքը՝ Լեռնային Ղարաբաղի ձեռք բերած առաւելութիւնը ընդգծելու եւ հանրութեան ուշադրութիւնը տնտեսական խնդիրներէն շեղելու համար: Հայաստանի մէջ ալ, ըստ վերլուծաբանի, ապրիլեան պատերազմը երկու հիմնական զգացողութիւն առաջացուցած է՝ «վրէժխնդրութեան ցանկութիւն եւ դժգոհութիւն Ռուսիայէն»:

Իսկ ապրիլեան ընդհարումին պատճառով քաղաքական շահաբաժիններ շահած գլխաւոր ուժը, ըստ Foreign Affairs հանդէսի, Ռուսիան է:

Ամերիկացի վերլուծաբանի համոզմամբ՝ ապրիլ 5-ին ռուսերու միջնորդութեամբ ձեռք բերուած հրադադարը եւ բանակցային գործընթացի յետագայ աշխուժացումը եկան վկայելու, որ «Ռուսիան շատ աւելի մեծ շահագրգռութիւն եւ լծակներ ունի տարածաշրջանին մէջ, քան Ֆրանսան կամ Միացեալ Նահանգները»:

«Ռուսիոյ ուղերձը Պաքուին հետեւեալն է՝ միայն Մոսկուան բաւարար ազդեցութիւն ունի Հայաստանի վրայ՝ այնպիսի համաձայնագրի կնքման հասնելու համար, որուն իբր արդիւնք Հայաստանի վերահսկողութեան տակ գտնուող տարածքներու գոնէ մէկ մասը կը վերադարձուի Ատրպէյճանին: Այս հեռանկարը գրաւիչ է ատրպէյճանցի իշխանաւորներու համար: Անոնք, սակայն, մտավախութիւն ունին, թէ ինչ կրնայ Մոսկուան պահանջել անոր դիմաց»,- կը գրէ ուաշինկթոնցի հետազօտողը՝ մանրամասնելով.- «Հաւանական է, որ Պաքուէն պահանջէն մաս կազմել Եւրասիական տնտեսական միութեան կամ ալ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան: Երեւանցի պաշտօնեաներն ալ մտավախութիւն ունին, որ Ռուսիան կրնայ պահանջել վերադարձնել 90-ականներուն գրաւուած տարածքները՝ փոխարէնը շատ քիչ բան տալով»:

Ճեֆրի Մանկոֆի խօսքով, կայ հեռանկար մը, որուն հաւասարապէս դէմ են թէ՛ Երեւանը եւ թէ՛ Պաքուն: Խօսքը Լեռնային Ղարաբաղի մէջ ռուս խաղաղապահներու տեղակայման մասին է:

«Ապրիլեան պատերազմը կարգաւորման գործընթացէն Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ տիրող հիասթափութեան վկայութիւնն էր: Խորհրդային Միութեան փլուզումէն յետոյ անցած 25 տարիներուն Հարաւային Կովկասը բաւական մեծ թիւով թատերական իրադարձութիւններու ականատեսը եղած է: Առկայ նախանշանները, սակայն, կը վկայեն, որ յառաջիկայ տարիներուն այս տարածաշրջանին մէջ նոր ցնցումներ պիտի ըլլան»,- կը գրէ Foreign Affairs հանդէսը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Կարօ Փայլան Դատ Բացած Է Էրտողանի Եւ Թուրքիոյ Դէմ



Թուրքիոյ խորհրդարանի հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան

«Ես դատ բացած եմ Թուրքիոյ դէմ», այսպէս ըսա ծ է Թուրքիոյ խորհրդարանի ( HDP կուսակցութեան անդամ) հայազգի պատգամաւոր Կարօ Փայլան՝ խօսելով Թուրքիոյ նախագահ Ռէճէպ Թայէպ Էրտողանի դէմ դատ բանալուն մասին:

Ան նշեց, որ Էրտողանը իր յայտարարութիւններուն մէջ կ՛օգտագործէ հակահայկական արտայայտութիւններ՝ հայերուն ներկայացնելով որպէս թշնամիներ:

Յիշեցնենք, որ հայազգի պատգամաւորին զայրացուցած էին Էրտողանի՝ տրապիզոնեան հանրահաւաքի ընթացքին ծայրայեղականներուն կողմէ կատարուած հակահայ վանկարկումները:

Խօսելով դատէն իր ունեցած սպասելիքներուն մասին Կարօ Փայլան նշեց , որ ինքը Թուրքիոյ դատարանէն արդարութիւն չակնկալեր, քանի որ այն լուրջ կախուածութիւն ունի երկրի ղեկավարէն: «Այն չի կրնար Էրտողանի դէմ որոշում ընդունիլ, չունի այդ ազատութիւնը»,- ըսաւ ան:

«Ես միշտ օգտագործելու եմ իմ հնարաւորութիւնները՝ խորհրդարանը, լրատուամիջոցները, ընկերային ցանցերը՝ դադարեցնելու հայերու դէմ Էրտողանի ըրած յայտարարութիւնները , ըստ որոնց՝ հայերը թշնամիներ են»:

Հարցին , թէ չի վախնար, որ թրքական իշխանութիւնները հաշուեյարդար կը տեսնեն իր հետ, պոլսահայ պատգամաւորը պատասխանեց,- Ես չեմ վախնար այս պայքարէն, ամէն օր Թուրքիոյ մէջ մարդիկ կը մեռնին: Ես չեմ կրնար այդ ըսել: Մենք պէտք է բարձրաձայնենք մեր խնդիրներու մասին: Ես ունիմ միլիոնաւոր աջակիցներ Թուրքիոյ մէջ եւ պէտք է անոնց լսելի դարձնեմ խնդիրները: Եթէ ես լռեմ, փորձագարի կը զառնեմ իմ ինքնութիւնը: Յիշեցնելու համար ըսեմ, որ Հրանդ Տինքն ու Ռուբէն Սեւակ չլռեցին: Եթէ դուն ճշմարիտ ես, չպէտք է լռես: Ես եւ հայ համայնքը ճշմարիտ ենք եւ իրաւունք ունինք խօսելու»:

Կարօ Փայլան շեշտեց , որ չի վստահիր Թուրքիոյ արդարադատութեան համակարգին: «Եթէ Թուրքիոյ մէջ ես այս դատը չշահիմ, դիմելու եմ Մարդու Իրաւունքներու Եւրոպական դատարան»,- եզրափակեց Կարօ Փայլան:

## Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւն. «Թուրքիան Պէտք Է Հեռու Պահուի Լեռնային Ղարաբաղի Բանակցային Գործընթացէն»




Հոկտեմբեր 14-ին Երեւանի մէջ կայացած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) գագաթնաժողովին, լրագրողներու հետ ճեպազրոյցին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրով որոշեց կարեւորել Թուրքիոյ դերը ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործին:

Սերգէյ Լաւրով մասնաւորապէս, ըսած է.- «Այն որ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի ապաշրջափակումը՝ ապահովելով տարածաշրջանէն ներս տնտեսական նորմալ փոխգործակցութիւն, կարեւոր գործօն է, որը մենք միշտ հաշուի ենք առնում: Եթէ յանկարծակի Հայաստանն ու Թուրքիան վերադառնան իրենց պայմանաւորուածութիւնների կատարմանը՝ առանց այն կապելու ղարաբաղեան հակամարտութեան հետ, մենք միայն ուրախ կը լինենք: Սակայն մեր պատկերացմամբ, ղարաբաղեան կարգաւորման գործում առաջընթացը առանցքային կը լինի, որպէսզի հայ-թուրքական յարաբերութիւնները նորմալանան»:

Հայաստանի արտաքին գործ նախարարի մամլոյ քարտուղար Տիգրան Բալայեանը ըսաւ .- «Տարիներ շարունակ Ռուսաստանի դիրքորոշումը՝ հնչեցուած ամենաբարձր մակարդակով, եղել է եւ համահունչ է մեր այն սկզբունքային դիրքորոշմանը, որ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը պէտք է լինի առանց որեւիցէ նախապայմանների: Մենք շարունակում ենք հաւատարիմ մնալ մեր այդ սկզբունքային դիրքորոշմանը»:

Յատկանշական է, որ ընդամէնը ժամեր վերջ Թուրքիոյ արտգործնախարարութիւնը ողջունեց Լաւրովի յայտարարութիւնը: Որուն իբր պատասխան Հայաստանի փոխարտգործնախարար Շաւարշ Քոչարեանը յայտարարեց.- «Թուրքիան իր բացայայտ միակողմանի դիրքորոշմամբ տեղ չունի, եւ պէտք է հեռու պահուի Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացից: Միակ դրական ազդեցութիւնը, որ Անգարան կարող է ունենալ ԼՂ կարգաւորման հարցում, այն է, որ Թուրքիան բացի Հայաստանի հետ սահմանը եւ վերջ դնի Ադրբեջանի սադրիչ եւ ապակառուցողական քայլերի խրախուսումը»: մավարական տեսանկիւններից այդ խնդիրների՝ մէկ փաթեթի մէջ ներառելը համարում եմ ոչ նպատակայարմար»:

www.massispost.com

## Զեկոյց՝ Հայաստանի Բնակչութեան Մօտ Վեց Տոկոսը Այսօր Թերի կը Սնուի

«Հայաստանի բնակչութեան մօտ վեց տոկոսն այսօր թերի է սնուում»,- կը պնդեն Ուաշինկթըն գործող Միջազգային պարենային քաղաքականութեան հետազօտութիւններու հիմնարկի մասնագէտները՝ այս շաբաթ հրապարակած իրենց ամէնամեայ զեկոյցին մէջ:

Սովի եւ պարենային ճգնաժամերու ուսումնասիրութեամբ զբաղող հետազօտական այս կառոյցի մասնագէտներու տուեալներով, թերսնուածութեան մակարդակը Հայաստանի մէջ վերջին մէկուկէս տասնամեակին նուազեր է շուրջ երեք անգամ: «2000-ին նորմայից քիչ սնունդ էր սպառում Հայաստանի բնակչութեան աւելի քան մէկ հինգերորդը կամ 21 տոկոսը»,- կ'արձանագրեն ուաշինկթընեան հետազօտական կեդրոնի մասնագէտները:

Համեմատութեան համար՝ դրացի Վրաստանի մէջ թերսնուածութեան մակարդակը այսօր աւելի բարձր է, քան Հայաստան: Զեկոյցի հեղինակներուն տուեալներով, այժմ թերի կը սնուի Վրաստանի բնակիչներու 7.4 տոկոսը:

Պարենային քաղաքականութեան հետազօտութիւններու հիմնարկի մասնագէտները, ի դէպ, կ'արձանագրեն, որ թերսնուածութեան մակարդակով հարաւ-կովկասեան պետութիւններու շարքին առաւել բարւոք վիճակի մէջ է Ազրպէյճանը: Այստեղ սահմանուած օրինակէն քիչ սնունդ կը սպառէ բնակչութեան մօտ մէկուկէս տոկոսը միայն:

Դատելով զեկոյցին մէջ տեղ գտած տուեալներէն՝ Ազրպէյճանը վերջին 15 տարիներուն յաջողած է կտրուկ կերպով նուազեցնել թերսնուածութեամբ տառապող իր քաղաքացիներու թուաքանակը:

«2000 թուականին Ազրպէյճանն այս ցուցանիշով Հարաւային Կովկասի առաջատարն էր, այստեղ թերի էր սնուում բնակչութեան աւելի քան 22 տոկոսը»,- կ'արձանագրեն փաստաթուղթի հեղինակները:

Ամերիկացի մասնագէտները նաեւ փորձէր են բացայայտել ազգաբնակչութեան ամենախոցելի խումբին մէջ՝ մինչեւ հինգ տարեկաններու սահմանին նկատուող բնախօսական միտումները, որոնք եւս ուղղակի կապ ունին սպառող սնունդի քանակի եւ որակի հետ:

Ուաշինկթըն գործող հետազօտական կեդրոնի տրամադրութեան տակ եղած վերջին տուեալներով, Հայաստան բնակող մինչեւ հինգ տարեկան երեխաներու մօտ 5 տոկոսի քաշը՝ հասակի համեմատ, սահմանուած օրինակէն պակաս է: «Նոյն տարիքային խումբի ներկայացուցիչներու մօտ 13 տոկոսի հասակն ալ միջինէն ցած է».- կ'արձանագրեն հետազօտական կեդրոնի փորձագէտները:

Միջազգային պարենային քաղաքականութեան հետազօտութիւններու հիմնարկի տուեալներով, սակայն, Հարաւային Կովկասի պետութիւնները թերսնուածութեան մակարդակով ցած վտանգի գօտիին մէջ են:

Յետխորհրդային պետութիւններէն այս առումով առաւել մտահոգիչ է միջինասիական շարք մը պետութիւններու եւ Մոլտովայի մէջ ստեղծուած կացութիւնը:

## Մոսկուա-Երեւան Հանրակարգի Վթարէն 5 Մարդ Մահացած է, 27-ը Վիրաւորուած



Մոսկուա-Երեւան հանրակարգը վթարի ենթարկուած է այսօր առաւօտեան՝ Հիւսիսային Օսեթիայի մէջ՝ Բեսլան քաղաքէն 6 քմ հեռաւորութեան վրայ ։ Վթարի պատճառով 5 մարդ մահացած է, 27-ը վնասուածքներ ստացած են, այդ կարգին են՝ 5 երեխայ:

Վլադիկավկազի մանկական բուժարանի բժիշկ Զալինա Գաբուեւան փոխանցեց, որ տուժած երեխաներէն երկուքը վերակենդանացման բաժանմունքին մէջ են:

Հիւսիսային Օսեթիայի առողջապահութեան եւ Հայաստանի արտակարգ իրավիճակներու նախարարութիւններէն ստացուած վերջին տուեալներով, Մոսկուա-Երեւան հանրակարգի վթարի հետեւանքով Վլադիկավկազի 3 հիւանդանոցներուն մէջ կը գտնուի 10 տուժած:

Վլադիկավկազի հանրապետական հիւանդանոց. Բաղրամեան Նորիկ Սարգսի (ծն.1950), Յարութիւնեան Ժասմին Մովսէսի (ծն.1949), Պօղոսեան Սերեան Սմբատի (ծնվ.1990):

Վլադիկավկազի քաղաքի մանկական հանրապետական բուժարան հիւանդանոց. Պալուխին Պաւէլ Պետրովիչ (ծն.2001) ծանր, Գալատով Ալեքսանդր Անդրէյեւիչ (ծն. 2000) ծանր, Լազուկին Անդրէյ Անատոլեւիչ (ծն.2006) ծանր, Ռոստոմախին Ալ էքսեյ Եվգենեվիչ (ծն. 2000) ծանր, Դաւթեան Տիաննա Ալպերթի (ծն.2005) միջին ծանրութեան:

Շտապօգնութեան բուժական հիւանդանոց. Պղտասարեան Հրատ Կառլի (ծն.1949) ծանր, Սատինեան Ալան Աւտապովիչ (ծն.1978) միջին ծանրութեան:

Ջոհեր. Յունանեան Արեւիկ (ծն.1960), Պօղոսեան Եուրա (ծն.1954), Լազուկին Ա. Վ. (ծն.1968), Պանչենկօ Վ. Մ. (ծն.1973), Մամչենկօ Ս. Ս. (ծն.1999):

Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեանը այսօր նամակով դիմած է Ռուսիոյ վարչապետ Տիմիթրի Մետվետեւին՝ Ռուսիոյ արտակարգ իրավիճակներ ու նախարարութեան օգնութեամբ մարդասիրական օդափոխադրում իրականացնելու համար: Ռուսիոյ մէջ, Հայաստանի դեսպանի խորհրդական, մամլոյ խօսնակ Լեւոն Թորգոմեանը փոխանցեց, որ այդ աշխատանքները արդէն ընթացքի մէջ են:

Հայաստանի երթեւեկի, կապի եւ տեղեկատուական արուեստագիտութիւններու նախարարութենէն կը յայտնեն, որ վթար էն տուժած 26 քաղաքացիներ այսօր Բեսլանէն օդանաւով կը վերադառնան Հայաստան: Նոյն ինքնաթիռով Երեւան կը տեղափոխուին նաեւ վթարի հետեւանքով զոհուած երկու քաղաքացիներու՝ Արեւիկ Լունոնեանի եւ Եուրի Պօղոսեանի աճիւնները:

## Վիգէն Սարգսեան՝ Պաշտպանութեան Նախարարը Պէտք է Լինի Քաղաքական Պաշտօնեայ

«Երեւանէքսբօ» ցուցահանդէսային համալիրին մէջ այսօր բացուեցաւ Սպառազինութիւններու եւ պաշտպանական արուեստագիտութիւններու «ArmHiTec-2016» առաջին միջազգային ցուցահանդէսը, որուն նպատակն է՝ ներկայացնել Հայաստանի եւ այլ պետութիւններու նորագոյն ռազմական չափագիտութիւնները, ռազմարդիւնաբերութեան նորարարական մշակումները:

Ցուցահանդէսի պաշտօնական բացման ներկայ էին ՀՀ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանը, ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Նիկոլայ Բորդիւժան:



ՀՀ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան

Լրագրողները ՀՀ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանին հարցեր ուղղեցին՝ կապուած նաեւ նախարարի պաշտօնին իր նշանակման, ինչպէս նաեւ իր հասցէին հնչող այն քննադատութիւններուն, թէ նոյնիսկ բանակ չէ ծառայած, չունի զինուորական կրթութիւն:

«Կարծում եմ՝ նրանք, ովքեր ծանօթ են ՀՀ Սահմանադրութեանը, գիտեն, որ Պաշտպանութեան նախարարութեան հիմնական գործառոյթը քաղաքացիական վերահսկողութիւնն է ԶՈՒ նկատմամբ, եւ կապն է ԶՈՒ-ի՝ պետութեան մնացած բոլոր կառոյցների հետ, որոնք պէտք է մոբիլիզացուեն ռազմական գործողութիւնների պարագայում: Կարծում եմ՝ Պաշտպանութեան նախարարութեան գործառոյթը հենց դրա մէջ է, սկզբունքօրէն պաշտպանութեան նախարարը պէտք է լինի քաղաքական պաշտօնեայ, այլ ոչ թէ զինուորական»,- ըսաւ ան:

Հարցին, թէ ի՞նչ փոփոխութիւններ պէտք է ակնկալել պաշտպանական գերատեսչութեան մէջ, քանի որ ապրիլեան պատերազմէն յետոյ շատ քննադատուած է 80-ականներու զէնքերով կռուիլը, Վիգէն Սարգսեանը պատասխանեց.

«Յառաջիկայ օրերին, երբ Կառավարութիւնն իր ծրագիրը ներկայացնի ԱԺ-ում, յստակ ամրագրուած կը լինեն պաշտպանութեան ոլորտում այս կառավարութեան հիմնական նպատակն ու ուղղութիւնները: Ես դրանց մասին առիթ ունեցել եմ խօսելու, խօսքը վերաբերում է ազգ-բանակ գաղափարախօսութեանը, կոնցեպցիային, բայց դա չի նշանակում հասարակութեան զինուորականացում, այլ նշանակում է, որ պետութեան բոլոր կառոյցները մշտապէս պէտք է ժամանակի մի մասը յատկացնեն երկրի պաշտպանութեան խնդիրներում իրենց ներդրումն ունենալուն»:

Վիգէն Սարգսեանը ՊՆ նախկին նախարար Սէյրան Օհանեանի չվերանշանակուիլը չի կապէր ապրիլեան քառօրեայ ռազմական գործողութիւններու հետ.-

«Կարծում եմ՝ հանրապետութեան նախագահը, գերագոյն գլխաւոր հրամանատարը Պաշտպանութեան նախարարութիւնում շատ յստակ ներկայացրեց փոփոխութեան հիմնաւորումը եւ այն գաղափարախօսութիւնը, որ դրուած է

Շար.ը էջ 6

## Անցկացուել են Բազմաստիճան Հրամանատարաշտաբային Զօրավարժութիւններ

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան առաջին բանակային զօրամիաւորման շրջանակում օրերս անցկացուել է բազմաստիճան հրամանատարաշտաբային զօրավարժութիւն:

Պաշտպանութեան նախարարութեան լրատուական ծառայութեան փոխանցմամբ, առանձնակի ուշադրութիւն է յատկացուել ապրիլեան մարտական գործողութիւնների վերլուծութեան արդիւնքում կատարուած ճշգրտումներին եւ նորամուծութիւնների գործնական կիրառմանը:

«Բազմաստիճան հրամանատարաշտաբային զօրավարժութեան աւարտական փուլում, զօրամիաւորման ենթակայ զրահատանկային զօրամասերից մէկի բազայի վրայ անցկացուել է ռեակտիւ հրետանային միջոցներով ուժեղացուած գումարտակային մարտավարական զօրավարժութիւն մարտական հրաձգութեամբ», - ասուած է ՊՆ հաղորդագրութիւնում:

# SARF-ի Ատենապետ Րաֆֆի Քէնտիրճեանի Խօսքը Սուրիահայութեան Նուիրուած Հաւաքի Ընթացքին




28 Դեկտեմբեր , 2014, առաւօտեան ժամը 10:00-ին, Պուրճ Համմուտի, Լիբանանահայ Օգնութեան Կեդրոնէն ներս ժամադրուած էի հանդիպելու 4 Սուրիահայ գաղթական ընտանիքներու հետ, որպէս՝ SARF-ի Փոխ-Ատենապետ:

Առաջին երկու հանդիպումները եկան ցոյց տալու թէ ինչպիսի կացութիւն կը տիրէ Սուրիոյ մէջ, եւ տակաւին աւելին սպասելու եւ լսելու յաջորդ երկու ընտանիքներէն:

Ահա պահը հասաւ հանդիպելու 3րդ ընտանիքին, որ արդէն այդ ընտանիքէն մնացած էր մայր մը եւ իր 5 տարեկան աղջնակը՝ Ալինան: Տարօրինակ զգացում մը պատեց զիս, մարմնով այնտեղ, բայց մտքով տեղափոխուեցայ Միացեալ Նահանգներ մտաբերելով իմ աղջիկս՝ Ալինան:

5 տարեկան Հալէպահայ Ալինային աչքերուն մէջ տեսայ վախը, սարսափն ու անորոշութիւնը: Անոր աչքերուն մէջ տեսայ, թէ ինչպէս այդպիսիներ իրենց մանկութիւնն են կորսնցուցած: Ի վերջոյ, Ալինային աչքերուն մէջ տեսայ բոլոր երեխաները, որոնք այսօր Սուրիոյ մէջ կ՚ապրին անմարդկային աղէտն ու տառապանքը, որ այլեւս դարձած է անհասկնալի ու անըմբռնելի:

Վերադարձիս, արդէն իմ մէջս փոխուած էր ըմբռնումը Սուրիոյ քաղաքական այս տագնապին, ու մանաւանդ՝ անոր թողած ազդեցութիւնը հայ գաղութին վրայ, նկատի առած անոնց տառապանքն ու վիշտը:

Այս բոլորը, սակայն, պատճառ չդարձան յուսալքութեան, եւ կամ աշխատանքները չշարունակուեին, ընդհակառակը՝ SARF-ի ճամբով աշխատանքներուն առաւել թափ տրուեցան, որպէսզի հանգանակային արշաւներն ու ծրագիրները իրականան եւ առաւել չափով նպաստեն Սուրիահայ մեր գաղութի բոլոր գաւակներուն, յատկապէս Հալէպահայութեան, որոնք տակաւին կապուած կը մնան իրենց պապենական աւանդին:

Դժբախտաբար, Սուրիոյ բոլոր գաղութները անխտիր կրեցին մարդկային ու նիւթական ծանր կորուստներ, ինչպէս մեծ թիւով գաղթականներ, որոնք տեղափոխուեցան աշխարհի տարբեր անկիւններ, ի մասնաւորի Լիբանան եւ Հայաստան, միշտ վերադառնալու յոյսով ու հեռանկարով: Այստեղ կ՚ուզեմ մօտաւոր թիւեր փոխանցել ձեզի, թէ ինչպիսի իրավիճակ կը տիրէ Սուրիոյ մէջ եւ Սուրիայէն դուրս ապրող մեր Սուրիահայերուն: Այսօր սիրելիներ,

Քեսապի մէջ հայութեան թիւը կը հաշուէ մօտաւոր 1035 հոգի:

Քամիշլիի մէջ պատերազմէն առաջ կային 1000 ընտանիք, իսկ այսօր կը հաշուէ 300 ընտանիք:

Հասէքէի մէջ պատերազմէն առաջ կային 150 ընտանիք, իսկ այսօր՝ 60 ընտանիք, մեծաւմասամբ տարեցներ:

Ras ou Al Aan, Aamouda and Derbasii մէջ բոլորովին հայերէ դատարկ, ուր դպրոցներ, եկեղեցիներ կիսափլատակ եւ Իսլամական Պետութեան բռնատիրութեան տակ (ISIS):

Լաթաքիայ եւ Դամասկոս միասին կը հաշուեն մօտաւոր 10,000 հայեր:

Տէր Զօրի Նահատակաց մատուռը բոլորովին փլատակ:

Լիբանանի մէջ կան մօտաւոր 15,000 սուրիահայեր:

Հայաստանի մէջ դարձեալ մօտաւորապէս կան 15,000 սուրիահայեր:

Գանատայի մէջ կան շուրջ 2500, որոնք վերջերս հաստատուած են:

Աւստրալիայի մէջ քանի մը հարիւր ընտանիքներ:

Եւրոպական այլ երկիրներու մէջ թիւը հազիւ 3000ի շուրջ է:

Իսկ Հալէպը Սուրիահայութեան սիրտը, այսօր կը հաշուէ մօտաւոր 7000 հոգիներ:

Այս բոլորը մօտաւոր թիւեր են եւ վերջին տուեալներու համաձայն, որուն համար SARF-ը յատուկ աշխատանք ծրագրած է տանիլ յառաջիկային, որպէսզի այս տուեալները ստոյգ ըլլան, որովհետեւ յաճախ այս թիւերը փոփոխական են տեղաշարժման պատճառով:

Սիրելիներ, այս բոլոր աշխատանքներուն ետին մենք բոլորս ենք կազմած, ձեռք ձեռքի տուած, որպէս մէկ սիրտ, մէկ հոգի եւ մէկ բռունցք, իւրաքանչիւրիս ամբողջական մասնակցութեամբ, որուն դիմաց մեր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը կը յայտնենք ձեր բոլորին: Ձեր այս անվերապահ մասնակցութիւնը եկաւ անգամ մը եւս ցոյց տալու, թէ Միացեալ Նահանգներու Հայ Գաղութը պատրաստ է, ինչպէս անցեալին, նաեւ այսօր իր զօրակցութիւնը բերելու, իր եղբայրական սէրն ու հոգածութիւնը հանդէպ Սուրիահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Յարգելի ներկաներ, SARF-ի ստեղծման դրդապատճառն ու ամբողջ նպատակը մարդասիրական աջակցութիւն եւ զօրակցութիւն ցուցաբերել է մեր Սուրիահայ գաղութին: Այսօրուան այս հաւաքը նպատակ չունի քաղաքական վերլուծումներ կատարելու, բայց նկատի առած վերջին շաբաթներու ծանրացող իրավիճակն ու կացութիւնը Հալէպի մէջ, կարծէք վճռական ու առաջ քայլեր առնելու մարտահրաւէրին դիմաց կը դնէ մեզ բոլորս, եւ մեզ կը պարտաւորեցնէ, որ այսօր մենք եւս մեր մօտեցման եղանակը փոխենք քայլ պահելու համար օրուան տագնապներուն եւ ըստայնմ ճիշդ ու տեղին լուծումներ տալու: Եթէ արդէն տեղեակ չէք, Հալէպահայութեան գոյատեւման խնդիրը մահու կենաց հարց է:

Աղօթենք, որ այս ահաւոր վիճակը, ցաւի ու տառապանքի, շուտով իր աւարտը գտնէ, եւ մեր հարազատները կարենան իրենց նախկին խաղաղ կեանքին վերադառնալ:

Մինչ այդ, այնքան ատեն, որ Սուրիոյ տարածքին Հայ գաղութը կը շնչէ ու գոյատեւման պայքար կը մղէ, չենք կրնար անտարբեր մնալ, այլ մեզմէ կը պահանջուի մեր կարելիէն աւելին ընել եւ օգնութեան ձեռք երկարել, որովհետեւ անոնք կը սպասեն մեզ:

Սիրելիներ, վերադառնանք Հալէպահայ 5 տարեկան Ալինային, այս անգամ ոչ առանձին, այլ ձեզի հետ միասին: Վերադառնանք Ալինային եւ իր նման բոլոր ընկերընկերուհիներուն, եւ մեր ամբողջական մասնակցութեամբ սրբենք անոնց աչքերէն ամէն արցունք: Վերադարձնենք անոնցմէ խլուած ուրախութիւնը, ժպիտն ու անմեղութիւնը: Ներշնչենք անոնց մէջ գոյատեւելու եւ ապրելու յոյսն ու հաւատքը:

Սիրելիներ, եկէ՛ք, միասնաբար կեանքեր փրկենք:

## Պաշտպանութեան Նախարարը

Շարունակուած էջ 5-էն

պաշտպանութեան քաղաքացիական նախարար նշանակելու հիմքում»:

Լրագրողներու հարցին՝ հնարաւո՞ր է, որ պաշտօնաթող ըլլան հանրութեան կողմէ քննադատելի բարձրաստիճան զինուորականները, գեներալները, Վիգէն Սարգսեանը պատասխանեց.

«Բանակում չարաշահումների վերացումն ազգ-բանակի կառուցման կարեւոր բաղադրիչներից մէկն է, որովհետեւ դրա հետ է կապուած վստահութիւնը դէպի Զինուած ուժեր»:

Լրագրողներէն մէկուն դիտարկման, թէ Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարը յայտարարութեամբ հանդէս եկած է՝ ըսելով, որ աւելի զօրեղ հարուած պիտի հասցնեն, Վիգէն Սարգսեանը պատասխանեց.

«Իսկ ի՞նչ կարելի է ակնկալել մի պետութիւնից, որը միշտ յայտարարում է այն մասին, որ փորձելու է խնդիրը լուծել ռազմական ճանապարհով: Իհարկէ, իրենք շատ անհանգստացած են եւ Իսկանդերներով, եւ այն ամէնով, ինչը տեսանք սեպտեմբերի 21-ի զօրահանդէսի ժամանակ»:


Bedros S. Maronian 818/500-9585

Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048

805 East Broadway
Glendale, CA 91205

300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101

• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability

• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning

• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B

ABA
A.B.A. INSURANCE SERVICES



NEW YORK LIFE · Anthem Blue Cross · BlueShield · Aetna · Health Net A Better Decision · CIGNA · KAISER PERMANENTE

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# «ՊԶՏԻԿՆԵՐՈՒՍ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅՍ ՔԱՐԵՐՈՒ ՏԱԿԷՆ ՀԱՆԵՑԻՆ»

## Մէկ Սուրիահայ Ընտանիք եւս Հայաստան Տեղափոխուեցաւ




Պատերազմող Սուրիոյ մէջ թողելով ամէն ինչ հալէպահայ Ժան եւ Գոհար Գալուստեանները իրենց փոքրիկներուն հետ ժամանեցին Երեւան:

4-ամեայ Գէորգն ու 3-ամեայ Ռիթան պատերազմի տարիներուն ծնած են: Մայրը՝ Գոհար Գալուստեանը «Ջուարթնոց» օդակայանէն լրագրողներուն պատմեց, որ անցեալ ուրբաթ հրթիռակոծման հետեւանքով երեխաները վնասուած էին: «Պզտիկներուս գլուխները վիրաւորուեցան, բայց փառք Աստուծոյ, տէրը բուժեց: Կէսօրին էր, ուրբաթ օր էր, երբ բոլորս տունը նստած էինք, ես դուան մօտ էի, գործ կ'ընէի, շատ հզօր հրթիռ մը ինկաւ մեր տան վրայ, տունս փլատակ ըրաւ: Պզտիկներս եւ ամուսինս քարերու տակ յայտնուեցան, քարերու տակէն հանեցին արիւնլուաչ: Կառավարութեան ներկայացուցիչները եկան, օգնեցին եւ հիւանդանոց տարին իրենց, ինձ ալ իջեցուցին տունէն: 6 վայրկեան չէր անցած, երբ երկրորդ հրթիռը աւելի ուժգին ինկաւ, ողջ շէնքը քարուքանդ եղաւ, տունս փլատակ ըրաւ»,- պատմեց Գոհար Գալուստեանը:

Հրթիռակոծման հետեւանքով վնասուած է նաեւ ընտանիքի հօր՝ Ժան Գալուստեանի ձեռքը եւ ոտքը: 51-ամեայ հալէպահայը մի քանի ժամ շարունակ մնացեր է տան փլատակներու տակ: Գալուստեանները ըսին, որ արդէն մի քանի անգամ վնասուած տունը երկու շաբաթ առաջ հողին հաւասարեցաւ:

Պատերազմի թոհուբոհէն հազիւ փրկուած ընտանիքը պատմեց քարուքանդ եղած Հալէպի մասին: «Հալէպ, ոչ մէկ նեղութիւն չ'ունէինք, իրականին Հալէպ լաւ էր վիճակը, շատ լաւ, ուրախ օրեր անցուցած ենք Հալէպի մէջ, ինչո՞ւ սուտ խօսիմ: Օգնութիւններն ալ շատ լաւ էին, պայմաններն ալ լաւ էին, բայց այս վերջին 6 տարիներուն մենք շատ նեղութիւններու մէջով անցանք, ոչ միայն ես, ընդհանուր Հալէպի ժողովուրդը շատ նեղութիւններու մէջով անցաւ: Մանաւանդ վերջին 6 տարիներուն ամուսինս երեք անգամ վատ վիճակի մէջ ինկաւ, անգամ մը օդակայանի ճանապարհին, յաջորդ անգամ շուկային մէջ յայտնուեցաւ պատահարի մէջ»,- ըսաւ Գոհարը:

Ընտանիքը Հալէպէն օդօյով 8 ժամուան ընթացքին հասած է Լիբանան, յետոյ մեկնած Տուպայ, ուրկէ ալ վերջապէս տեղափոխուած է Երեւան:

Մի քանի ճամպրուկով հայրենիք եկած ընտանիքը փլատակներու տակէն կրցած է որոշ իրեր հանել, որոնք, սակայն, մեծ մասամբ վնասուած են, եւ, ինչպէս Գոհարը պատմեց, բարի մարդկանց նուիրած հագուստները առած են ու ձեւով մը հասցուցած են հեռանալ պատերազմող երկրէն.- «Մեր տունէն ոչ մէկ բան չհասցուցինք վերցնել, այս մեր պայուսակները որ կան՝ հագուստներ... օգնութիւններ տուած են պզտիկներուն, մեր տունէն ոչ մէկ հագուստ չկրցանք վերցնել»:

Գոհարի խօսքով, հալէպահայութիւնը կ'ուզէ դուրս գալ Սուրիայէն, սակայն գումար չունի: «Չի կրնար, դժուար է: Հալէպահայութիւնը արդէն գործ չունի, մանաւանդ, երբ զաւակներ ունիս, որոնք շորի ու ուտելիքի կարիք ունին, առանց այդ օգնութիւններու չեն կրնար մնալ: Մենք շատ տառապեցանք: Հայկական համայնքի առաջնորդները կ'ըսեն՝ «մի գաղթէք», բայց պատճառ չեն նշեր: Ոչ ալ կ'ըսեն՝«գաղթէ», բայց ժողովուրդը կ'ուզէ դուրս գալ Հալէպէն: Հայրս, մայրս, քոյրերս կ'ուզեն ելլել Հալէպէն: Քոյրերս մօտակայ շրջանին կու գան Հայաստան»:

*Հանդէս եկած է աշխարհի կարեւորագոյն բեմերէն, ինչպէս, Նիւ Եորքի Metropolitan Opera եւ Carnegie Hall, Շիքակոյի Lyric Opera of Chicago, Los Angeles Opera, San Francisco Opera, Թորոնթոյի Canadian Opera Company, Լոնտոնի Covent Garden եւ Wigmore Hall, Փարիզի Garnier եւ Bastille, Սալցպուրկի Salzburg Festspiele, Տրէզտէնի Semperoper, Ճափոնի Saito Kinen Festival, Պարսելոնայի Gran Teatre de Liceu, գործակցելով կարեւոր երաժիշտներ, Placido Domingo-ի, Seiji Ozawa-ի, Michael*

Շար.ը էջ 17

# «ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 60 ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ





Հոկտեմբերի 11-ին ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ հանդիսաւորութեամբ նշուեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հիմնադրման 60 ամեակը:

Մասնակիցները ծաղիկներ դրեցին Օղակաձեւ զբօսայգու Բարերարների ճեմուղում Գալուստ Կիւլպէնկեանի յուշարձանին:

Այնուհետեւ՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան մեծ դահլիճում մեկնարկեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հիմնադրման 60 ամեակին նուիրուած գիտաժողովը, որին ներկայ էին ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրամի հայկական համայնքների բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը, գիտնականներ, մտաւորականներ, հիւրեր:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ նա մասնաւորապէս նշեց. «Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հիմնադրման 60-ամեակի առթիւ մենք որոշեցինք մէկ անգամ եւս անդրադառնալ եւ արժեւորել մեծ հայի կեանքն ու գործը: 1869 թուականը խորհրդանշական էր հայ ժողովրդի համար: Ծնուեցին հայոց մեծերը՝ Ամենայն հայոց բանաստեղծը՝ Յովհաննէս Թումանեանը, մեծագոյն դրամատուրգը՝ Լեւոն Շանթը, երգիծանքի վարպետը՝ Երուանդ Օտեանը, հայ երգի մաշտոցը՝ Կոմիտասը, հայ վրիժառուն՝ Սողոմոն Թեհլերեանը եւ վերջապէս համաշխարհային խոշոր նաւթարդիւնաբերողը, մեծ բարերարը՝ Գալուստ Կիւլպենկեանը:

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութիւնն անշուշտ իրականացնում է քաղաքական ու աշխարհագրական սահմաններ չճանաչող, բարեգործութեան խորհրդանիշ հանդիսացող Գալուստ Կիւլպենկեանի իղձերն ու նպատակները՝ բարձր մշակոյթի ստեղծումն ու տարածումը, սփիւռքահայութեանն ու Հայաստանին յուզող բազմաթիւ կենսական հարցերի ու խնդիրների լուծմանն օժանդակումը:

Հպարտութեան զգացում եմ ապրում, որ հայ ժողովրդի զաւակի կտակով է Լիսաբոնում հիմնադրուել իր իսկ անունը կրող «Գալուստ Կիւլպէնկեան» բարեգործական ու գիտամշակութային հաստատութիւնը, որն այսօր վերածուել է համայն մարդկութեան առաջընթացին սատարող հզօր կառոյցի՝ իր կարեւորութեամբ չզիջելով համաշխարհային խոշորագոյն նմանատիպ կազմակերպութիւններին:

Համաշխարհային համբաւի տիրացած մեծահարուստը երբեք չմոռացաւ իր արմատները: Թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի եւ Յորդանանի հայկական գաղութներում իր առատաձեռն նուիրատուութիւններով կառուցուեցին, վերանորոգուեցին, կահաւորուեցին դպրոցներ ու առողջապահական կեդրոններ: Նրա միջոցներով առ այսօր սփիւռքահայ հազարաւոր պատանիներ ու երիտասարդներ ստացել եւ ստանում են միջնակարգ եւ բարձրագոյն կրթութիւն: Կառոյցը, հաւատարիմ իր հիմնադրի նպատակներին, հետեւողական է դպրոցաշինական ծրագրերի իրականացմանը: Հայկական համայնքների բաժանմունքի կրթաթոշակներից օգտուել եւ օգտւում են առաջադիմութեամբ աչքի ընկնող, սոցիալապէս անապահով հայ աշակերտներն ու ուսանողները: «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական համայնքների բաժանմունքի աջակցութեամբ հրատարակուել է 750-ից աւելի հայագիտական աշխատանքներ, որոնցից 250-ը՝ Հայաստանում:

Յատուկ շնորհակալութիւն եմ ուզում յայտնել հիմնարկութեանը՝ Սիրիայում՝ յատկապէս վերջին տարիներին, կրթական ոլորտում իրականացրած ծրագրերի համար: Նշեմ, որ Սիրիայում 20 հայկական դպրոց է գործում, որտեղ 2861 երեխայ է կրթւում: Նրանք օգնութեան կարիք ունեն: Հիմնարկութիւնը հոգում է նաեւ 500-ից աւելի ուսանողների կրթավճարների ծախսերը:

Վստահ եմ, որ դեռ շատերն են անդրադառնալու մեծ հայի, զարմանալի մարդասերի, խոշոր տնտեսական գործչի, անգերազանցելի մտաւոր, հոգեւոր ու նիւթական հարուստ կարողութիւնների տէր մարդու կեանքի ու գործունէութեան չբացայայտուած դրուագներին, որոնք նորովի կը ներկայացնեն Գալուստ Կիւլպէնկեան բացառիկ երեւոյթի ու նրա միջոցներով գործող կառոյցի կարեւորագոյն առաքելութիւնը»:

«Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան» յոբելեանի առթիւ շնորհաւորանքի խօսքեր ասացին ու հաստատութեան ազգանուէր գործունէութիւնը մեծապէս արժեւորեցին ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսեանը եւ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնեանը:

«Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան» հայկական համայնքների բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը շնորհակալութիւն յայտնեց շնորհաւորանքների ու գնահատանքի համար: Խօսելով հիմնարկութեան գործունէութեան մասին՝ նա շեշտեց, որ մեծ բարերարն առաջնորդւում էր երեք սկզբունքով, որոնցով ուղղորդւում է հիմնարկութիւնը մինչեւ օրս՝ լուռ ու մունջ աշխատել, գործը լաւ անել եւ իմանալ նպատակը: «Բարեգործութիւնը լուռ պէտք է ըլլայ, երբ գործ մը ընէք, լաւ ըրէք այդ գործը, իմացէք՝ ուր պէտք է հասնինք», - սովորեցնում էր մեծ հայը:

Ամփոփելով հիմնարկութեան 60 տարուայ գործունէութեան արդիւնքները, Ռազմիկ Փանոսեանը նշեց, որ իրենց աշխատանքում յատկանշականը մարդուժ պատրաստելն է, երիտասարդ սերնդին կրթելը:

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի գիտաշխատող Վահրամ Ղարախանեանը ներկայացրեց «Գալուստ Կիւլպէնկեանի բարեգործական գործունէութիւնը»:

«Գալուստ Կիւլպէնկեան. «միայն ամենալաւը»» թեմայով զեկուցումով հանդէս եկաւ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի առաջատար գիտաշխատող Էդուարդ Մելքոնեանը:

ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասեանն անդրադարձաւ «Գալուստ Կիւլպէնկեանի հասարակական-քաղաքական գործունէութեանը»:

Հնչեցին հարցեր եւ առաջարկութիւններ:

Ամփոփելով գիտաժողովի արդիւնքները՝ ՀՀ սփիւռքի նախարարը կարեւորեց Գալուստ Կիւլպէնկեանի ծննդեան 150 ամեակին ընդառաջ՝ նրա արխիւների ուսումնասիրումն ու դասակարգումը, մեծ բարերարի ժառանգութեան գնահատումը:



# ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԻ ՏՕՆԻ ՆՇՈՒՄ ՍԻՏՆԻԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



Թարգմանչաց Տօնին առթիւ աւանդութիւն դարձած է Ուսուցիչներու Օրը տօնակատարել Սիտնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ մէջ:

9 Հոկտեմբերի առաւօտեան, Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերաշնորհ Տէր Հայկազուն Եպիսկոպոս Նաճարեանի հրաւէրով, աւելի քան 70 Հայ ուսուցիչ-ուսուցչուհիներ ներկայ գտնուեցան Սուրբ եւ Անմահ Պատարագին, զոր մատուցեց Սրբազան Հայրը: Ուսուցիչները հաղորդուեցան, օրհնութիւնը ստացան Սրբազան Հօր եւ լսեցին անոր ազգաշունչ պատգամը:

Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին, ուսուցիչները հրաւիրուեցան Խտկարեան Սրահ եւ համադամ ճաշերով հիւրասիրուեցան Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին կողմէ: Սրբազան Հօր կողքին հանդիսութեան ներկայ էին Արժանապատիւ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանը, Տէր Պարթեւ Քահանայ Գարագաշեանը, Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը, Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեանը, Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Ատենապետ Պրն Պետրոս Ջօրլուն եւ Ծխականի անդամներ՝ Տիարք Արա Գօփուշեանն ու Անդրանիկ Կիւլլիւմեանը:

Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի հանդիսավարութեամբ ի գործ դրուեցաւ յայտագիր մը, որու ընթացքին կարդացուեցաւ Սփիւռքի Նախարարուհի Տիկին Հրանոյշ Յակոբեանի պատգամը ուղղուած Հայ ուսուցչին: Խօսք առաւ Համազգային Գօլստըն ճեմարանի մանկավարժուհի եւ բարձրագոյն կարգերու Հայերէն լեզուի ուսուցչուհի Տիկին Արփի Դաւիթեան, որ ներկայացուց «Հայ Մանկավարժութիւնը 19րդ Դարէն մինչեւ Մեծ Եղեռն» նիւթը: Տիկին Դաւիթեան ծանրացաւ Արեւմտահայ հատուածին վրայ, մանրամասնօրէն վերլուծեց Զարթօնքի, Իրապաշտ եւ Գեղապաշտ շրջաններուն Հայ գրականութեան, լեզուի եւ կրթական համակարգի հոլովոյթը, տուաւ ամբողջական պատկերը քաղաքական եւ ընկերային իրավիճակներուն եւ անոնց ազդեցութիւնը Հայ մշակոյթի զարգացման վրայ: Ներկանյ ուսուցիչները՝ Համազգային Գօլստըն ճեմարանէն, ՀԲԸՄ Ալեքսանտր Վարժարանէն, Համազգային Թումանեան, Թարգմանչաց , Փափազեան, ՀԲԸՄ Ալեք Մանուկեան եւ Հայ Կաթողիկէ «Լոյս» շաբաթօրեայ վարժարաններէն, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանէն ու ՀՕՄի «Ուրախ Մանուկներ» Մանկապարտէզէն, մեծ գնահատանքով արտայայտուեցան Տիկին Դաւիթեանի ներկայացուցած զեկոյցին մասին:

Սրտի խօսք արտասանեցին Ալեքսանտր Վարժարանի Տնօրէն Պրն Մանուկ Տէմիրճեան եւ Թումանեան Վարժարանի ուսուցչուհի՝ Տիկ Զարինէ Խորէնեան:

Նախ քան փակման աղօթքը Սրբազան Հայրը դրուատանքով արտայայտուեցաւ Սիտնիի Հայ ուսուցիչներուն տարած կարեւոր աշխատանքին, շնորհաւորեց Տիկին Դաւիթեանը իր շահեկան դասախօսութեան համար եւ յաջողութիւն մաղթեց բոլորին, ի տեսութիւն 2017ի Հոկտեմբերին:

# ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ



Սեպտեմբերի 22-26-ը պատմական ու նշանակալից օրեր էին Չեռնոգորիայի հայ համայնքի համար: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինութեամբ այդ օրերին Չեռնոգորիայում էր գտնւում Ռումինիայի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Տաթեւ եպիսկոպոս Յակոբեանը:

Սեպտեմբերի 23-ին Սրբազան Հայրը հանդիպումներ է ունեցել տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնք ցանկութիւն էին յայտնել անժամկէտ ձեռք բերել Չեռնոգորիայի Մետրոպոլիտութեան ենթակայութեան տակ գտնուող Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին՝ կից սրահով ու հողատարածքով: Հանդիպման ընթացքում Առաջնորդ Սրբազան Հայրը համայնքի անդամներին բացատրել է Ծխական խորհուրդ ունենալու անհրաժեշտութիւնն ու կարեւորութիւնը, ներկայացրել է Ծխական խորհրդի պարտականութիւններն ու առաքելութիւնը եւ վերջում ընտրուել է Ծխական խորհուրդի կազմ՝ բաղկացած 7 անդամներից՝ Գուրգէն Զաքոյեան, Վահրամ Մարկոսեան, Աշոտ Փափազեան, Անդրէյ Մոսեսով, Վահէ Անեսեան, Իգոր Լախնովիչ, Գագիկ Մկրտչեան: Յատկապէս մեծ է Գուրգէն Զաքոյեանի եւ Վահրամ Մարկոսեանի ներդրումն ու աւանդը եկեղեցին փնտռելու, գտնելու եւ տեխնիկական հարցերը արագ եւ արդիւնաւէտ կարգադրելու հարցում:

Այս առիթով Գերշ. Տաթեւ եպիսկոպոս Յակոբեանը հանդիպում է ունեցել նաեւ Չեռնոգորիայի Մետրոպոլիտ Ամֆիլոխի հետ, որի ժամանակ քննարկուել են եկեղեցու ձեռք բերման ու հայ համայնքին փոխանցման հետ կապուած կարեւոր հարցեր: Չեռնոգորիայի Մետրոպոլիտն իր ուրախութիւնն ու աջակցութիւնն է յայտնել այս առիթով՝ փաստելով մէկ անգամ եւս, որ Չեռնոգորիայի պատմութեան մէջ առաջին անգամ Հայոց Եկեղեցին իր ներկայութիւնը պէտք է ունենայ այդ երկրի մէջ՝ կարեւոր մասնակցութիւն ունենալով ոչ միայն տեղի հայ համայնքի կեանքից ներս, այլ նաեւ նպաստելով միջեկեղեցական ու միջկրօնական յարաբերութիւնների զարգացմանը յատկապէս Արեւելեան Եւրոպայի երկրներում:

Սեպտեմբերի 25-ին, Սրբազան Հայրն իր մասնակցութիւնն է բերել նաեւ Չեռնոգորիայի Բար քաղաքում տեղի ունեցած Ս. Իովան Վլադիմիրի մարտիրոսութեան հազարամեակին նուիրուած տօնախմբութեան:

A SPECIAL TRIBUTE • ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
JACQUES S. HAGOPIAN



ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ
ԵՐԿՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՄԵԱԿ
ՏԱՐԵԴԱՐՁ՝ 100 ԵՒ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿ՝ 80

100TH BIRTHDAY
80 YEARS
OF UNPARALLELED SERVICE TO
ARMENIAN POETRY AND LITERATURE

Under the State Patronage of
The Republic of Armenia Consulate General in Los Angeles
Under the Auspices of:
Western Prelacy of the Armenian Apostolic Church of North America
Western Diocese of the Armenian Apostolic Church of North America
Armenian Catholic Exarchate of America
Armenian Evangelical Union of North America
Organized by:
MASHDOTS COLLEGE
Co-organized by the Following
Western Regional or Los Angeles-based Organizations:
Armenian Educational and Cultural Association of Hamazkayin
Armenian General Benevolent Union • Armenian Missionary Association of America
Armenian Society of Los Angeles • Armenian Writers Union of California
Iraqi Armenian Family Association • Nor Serount Cultural Association
Organization of Istanbul Armenians • Tekeyan Cultural Association

Sunday, October 30, 2016, 6:00 P.M.
Glendale Presbyterian Church
125 S. Louise Street, Glendale, California 91205
For More Information, Please call Mashdots College (818) 548-9345
E-Mail: mashdots@aol.com

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## 10 ԽՈՐՀՈՒՐԴ ԺԱՄԱՆԱԿԻ ՃԻՇԴ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

*Գործարար կիներ կ’աշխատին իրենք իրենց համար եւ, կը թուի, որ անոնք ունին հիանալի կարելիութիւն քնանալու, որքան կը փափաքին, աշխատավայրէն շուտ դուրս գալ, երբ որ կ’ուզեն, ճանբորդել:*

*Սակայն, լուրջ գործարար կիներու համար ազատ ժամանակը աւելի յագեցած է, քան իւրաքանչիւր գրասենեակային աշխատողի մօտ, այդ պատճառով ան գիտէ ազատ ժամանակին արժէքը եւ գիտէ, թէ ինչպէս պէտք է ծախսէ զայն:*

*-Տրապէ՛, բայց դանդաղ: Ազատ ժամանակի բացակայութիւնը եւ, ընդհանրապէս, ժամանակի պակասը խուճապի մատնուելու պատճառ չէ: Ծրագրաւորուած աշխատանքի պարագային դուք պիտի կարենաք ընել աւելի շատ բան, քան՝ շտապելով:*

*-Կառուցեցէք կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ ծրագիրներ: Կին ղեկավարը ոչ միայն ընկերութեան դէմքն է, այլ օրինակ՝ բոլոր աշխատողներու համար: Բացի աշխատանքային պարտականութիւններէն ան պէտք է լաւ տեսք ունենայ, 24 ժամ հասանելի ըլլայ գործակիցներուն համար եւ ատոր հետ մէկտեղ՝ ժամանակ գտնէ տնային գործերու եւ անձնական կեանքի համար: Որպէսզի ոչինչ խառնուի իրարու, պէտք է կազմել երկու տեսակ ծրագիր՝ կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ: Կարճաժամկէտը յաջորդ օրուան եւ գալիք շաբթուան համար, իսկ երկարաժամկէտը տարուան համար՝ ամիսներու բաժնուած: Կարճաժամկէտի մէջ ներառեցէք ոչ միայն աշխատանքային հանդիպումները, այլ նաեւ՝ տնային գործերը:*

*-Ծրագրաւորեցէք ձեր ժամանակը, ճկուն եղէք: Դուք կրնաք հիանալի ձեւով ծրագրաւորել ձեր օրը, սակայն անպայման բան մը այլ կերպով կ’ընթանայ: Աշխատեցէք այնպէս ընել, որ ձեր ծրագիրները ճկուն ըլլան, որպէսզի կարենաք տեղաշարժել զանոնք՝ ժամանակը անիմաստ ձեւով չկորսնցնելու համար:*

*-Բաժնեցէք պարտականութիւնները: Մի փորձէք ամէն ինչ ինքնուրոյն ընել, դուք ոչ միայն կը յոգնիք, այլ՝ կը հիւծիք: Ունեցէք անձնական օգնական կամ քարտուղար: Ազատուելով մանր եւ ոչ հրատապ գործերէն, դուք պիտի կարենաք ժամանակ տրամադրել մեծ գործերուն:*

*-Կեդրոնացէք աշխատանքի վրայ: Որքան ալ շատ գործ ծրագրաւորէք օրուան համար՝ զբաղելով անոնցմէ մէկով, մի շեղիք այլ գործերով: Անջատեցէք հեռաձայնը, մի մտնէք հասարակական ցանցեր:*

*-Մի ստուգէք ձեր նամակները՝ աշխատանքային օրուան սկիզբը: Եւ ընդհանրապէս, որքան հազուադէպ՝ այդքան լաւ:*

*Նամակներուն մեծամասնութիւնը կը պարունակէ աւելորդ, անպիտան տեղեկութիւն, որ ուղղակի անիմաստ կը զբաղցնէ ձեր գլուխը: Նամակները ստուգեցէք երեկոյեան, օրինակ, ճաշէն կէս ժամ ետք:*

*-Շաբաթը մէկ օր անպայման տրամադրեցէք ձեր հանգիստին կամ դուք ձեզի: Ի հարկէ աւելի լաւ պիտի ըլլար, եթէ աւելի շատ օրեր կարենայիք, սակայն մէկ օրը պարտադիր է:*

*Այդ օրը ամբողջութեամբ անջատուեցէք գործերէն:*

*-Ոչ մէկ գործ յետաձգեցէք: Գոյութիւն ունի այսպիսի կանոն՝ եթէ գործը տասը վայրկեանէն քիչ ժամանակ կը պահանջէ, պէտք չէ զայն ծրագրաւորել, այլ զայն պէտք է ընել նոյն օրը:*

*Եթէ անիկա աւելի շատ ժամանակ կը պահանջէ՝ զայն ընելու համար ծրագրաւորեցէք յստակ օր եւ ժամ:*

*-Սահմանափակեցէք ժամանակը այն գործերուն, որոնք ոչ օգուտ կը բերեն, ոչ հաճոյք կը պատճառեն:*

*-Ժամանակ չէ՞ք գտներ հետաքրքրական ֆիլմ դիտելու, մօտիկ ընկերուհիի հետ հանդիպելու: Սակայն երբ դնէք առաջնահերթութիւնները՝ պիտի տեսնէք, թէ որքան անիմաստ ժամանակ վատնած էք անպէտք բաներու վրայ, որոնք ոչ եկամուտ բերած են, ոչ ալ՝ օգուտ:*

*-Կարգ ու կանոն: Աշխատանքային սեղանի վրայ, նօթատետրի եւ համակարգիչի մէջ պէտք է կարգուկանոն ըլլայ: Ատիկա կ’օգնէ արագ գտնել պէտք եղած փաստաթուղթերը, փաթեթները եւ ի զուր ժամանակ չվատնել փնտռտուքներու վրայ:*

## 3 ՀԻՄՆԱՒՈՐ ՊԱՏՃԱՌ՝ ՁԿԱՆ ԻՒՂԸ ԱՇՆԱՆ ԵՒ ՁՄՐԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Հիւանդութենէ ամենալաւ պաշտպանութիւնը ժամանակ առ ժամանակ առողջութեան հետեւիլն է: Բայց, չես գիտեր ինչու, մարդոց մեծ մասը իր առողջութեան մասին կը յիշէ միայն, երբ ցուրտ է, եւ կը սկսի վարակիչ հիւանդութիւններու շրջանը: Երբ կը նկատես, որ հանրակառքերը լեցուն են փռշտացող եւ հազացող մարդոցմով, յանկարծ կը հասկնաս, որ մարմինը պէտք է պաշտպանել հիւանդութիւններէն: Լաւագոյնը, ինչ որ կարելի է առաջարկել այդ պարագային, ձկան իւղն է:*

*Ձկան իւղի բաղադրութեան մէջ կը մտնեն մեծ քանակութեամբ վիթամիններ, հանքանիւթեր եւ օմեկա-3 թթուներ, որոնք անհրաժեշտ են մարմնին՝ անոր լիարժէք աշխատանքին համար: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալներով՝ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը կը նուազեցնէ սրտի կաթուածի, ինչպէս նաեւ՝ սիրտ- անօթային հիւանդութիւններու յառաջացումը:*

*Ապացուցուած է, որ ձկան իւղի պարբերաբար օգտագործումը դրականօրէն կ’ազդէ դիմադրողական համակարգին վրայ: Ըստ որոշ հետազօտութիւններու՝ օմեկա-3 թթուները զգալիօրէն կը նուազեցնեն քաղցկեղի յառաջացման հաւանականութիւնը:*

*Ձկան իւղը կը կայունացնէ զարկերակային ճնշումը: Զայն կը նշանակեն թոքախտի, ռախիտի, անեմիայի պարագային:*

*Խորհուրդ կը տրուի դաշտանի ցաւի, յղութեան բարդութիւններու պարագային:*

*Կ’արտօնուի օգտագործել ճարպակալման, շաքարախտի, օսդէոփորոզի, փսորիազի պարագային:*

*Դրական ազդեցութիւն կ’ունենայ ջղային համակարգին վրայ:*

## ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՎԱՐԱԿԸ

*Երջանկութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ վարակ եւ կ’ապրի հետեւելով վարակիչ հիւանդութեան բոլոր կանոններուն:*

*Գիտնականներու կարծիքը՝*

*-Ըսէ ով է ընկերդ: Գիտնականները պարզած են, որ կեանքի հանդէպ դրական վերաբերմունքը կախեալ է ոչ թէ դրամ ըլլալէն կամ չըլլալէն, անձնական կեանքի յաջողութենէն ու ասպարէզի աճէն եւ, նոյնիսկ, ոչ առողջութենէն, այլ այն շրջապատէն, ուր մարդը կ’ապրի:*

*Եթէ մարդուն կը շրջապատեն երջանիկ, ժպտերես եւ բարեհամբոյր մարդիկ, ուստի այդ տրամադրութիւնը կը փոխանցուի նաեւ իրեն: Բացի այդ, գիտնականները կրցած են բանալ երջանկութեամբ «վարակուելու» բանաձեւը:*

*Անոնք եկած են այն եզրակացութեան, որ եթէ լաւագոյն ընկերը երջանիկ է, ուստի երջանիկ ըլլալու հնարաւորութիւնները կը մեծնան 25%-ով: Մեզ նոյնիսկ կրնայ երջանկացնել հեռու ծանօթներու երջանկութիւնը:*

*Ատիկա կապուած է անկէ, որ մարդիկ կը տրամադրուին մօտիկ գտնուող մարդոց ալիքին վրայ, եւ այդ պատճառով մեզի համար աւելի հաճելի է կապ ունենալ կեանքէն գոհ մարդոց հետ:*

*-Յղիութեան վարակ: Գիտնականները կը պնդեն, որ ոչ միայն երջանկութիւնը կրնայ վարակիչ ըլլալ, այլեւ՝ յղիութիւնը: Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ կիներ, որոնք յաճախ կապի մէջ են յղի ընկերուհիներու կամ գործընկերուհիներու հետ, կը յղիանան:*

*Ամենայն հաւանականութեամբ, կնոջ հետ կապը, որ կը գտնուի հաճելի սպասողական վիճակի մէջ, շատ լաւ կ’անդրադառնայ շրջապատի կիներուն վրայ, որուն շնորհիւ անոնց մօտ կը կարգաւորուի հորմոնալ հաւասարակշռութիւնը, որ նպաստաւոր է բեղմնաւորման համար:*

*-Ինչպէս երկարաձգել երջանկութիւնը: Փորձեցէք գրկել դուք ձեզ որեւէ բանէ, եղէք չափաւոր, հակառակ պարագային ամէն ինչ կը դադրի հաճոյք պատճառելէ:*

*-Երբեք մի նախանձիք: Անոնք չեն երջանիկ, որոնք ամէն ինչ ունին, այլ անոնք, որոնք կը բաւարարուին իրենց ունեցածով:*

*-Երբեք կանգ մի առնէք ձեռք բերուածին վրայ: Միշտ նպատակներ դրէք ձեր առջեւ եւ ձգտեցէք անոնց իրականացման:*

*-Պէտք չէ համեմատուիլ ուրիշի հետ: Արտաքուստ բարեկեցիկ մարդիկ իրականութեան մէջ կրնան դժբախտ ըլլալ:*

*-Աւելի լաւ է զղջալ ըրածին համար, քան՝ չըրածին: Լսեցէք կողքիններու խորհուրդները, բայց կայացուցէք ինքնուրոյն որոշումներ:*

*-Անոնք, որոնք չեն կրնար հանգստանալ, չեն կրնար արդիւնաւէտ աշխատիլ: Երբեք մի զոհաբերէք ձեր հանգիստը:*

*Եղէք երջանիկ:*

## ՉԱՄԻՉԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ՄԱՔՐԵԼ ԼԵԱՐԴԸ

*Չամիչը արժէքաւոր ուտելիք է ջղային համակարգը հանգստացնելու եւ քունը բարելաւելու համար:*

*Չամիչի իւրաքանչիւր հատիկ, հակառակ իր փոքրիկ չափին, կը պարունակէ արժէքաւոր, անհրաժեշտ ու մարմնի համար չափազանց առողջարար նիւթեր:*

*Չամիչի օգտակար յատկութիւնները կը բացատրուին թարմ խաղողի առողջարար ըլլալու փաստով, սակայն արժէքաւոր նիւթերը անոնց մէջ 10 անգամ աւելի շատ են, քան թարմ խաղողի հատիկներուն մէջ: Չամիչը կ’ամրապնդէ ջղային համակարգը ու կը բարելաւէ քունը՝ շնորհիւ վիթամին B-ի խումբերու մեծ քանակին: Անիկա կարելի է օգտագործել իբրեւ հանգստացնող միջոց, որ կը հանէ մարմնի լարուածութիւնն ու յոգնածութիւնը:*

*Լեարդը մաքրելը չամիչի միջոցով ամենաարդիւնաւէտ միջոցներէն մէկն է մարմնի բուժման ու քրոնիկ հիւանդութիւններէն ազատելու համար, չէ՞ որ նոյնինքն մարմնի աւելորդ նիւթերով ծանրաբեռնուածութիւնը կը խանգարէ անոր ինքնավերականգնման աշխատանքը, ինչպէս նաեւ զգալիօրէն կը նուազեցնէ դեղօրայքի ու աւանդական բժշկութեան բաղադրատոմսերու ազդեցութիւնը:*

## ՊԶՏԻԿՆԵՐՈՒՍ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅՍ

Շարունակուած էջ 7-էն

*մշտապէս կը հաստատուին հայրենիքի մէջ, թէ՞՝ ոչ: Առայժմ պարզ է, որ այստեղ կը մնան կէս տարի:*

*«Ջուարթնոց» օդակայանէն յետոյ տակաւին անծանօթ քաղաք շտապող սուրիահայ ընտանիքին առաջինը հիւրընկալեց Կարինէ Եարմալոյեանը: Ան համացանցէն տեղեկանալով Գալուստեաններու մասին, որոշած է հովանաւորել անոնց: Պատերազմական Հալէպի մէջ հազիւ գոյատեւող հալէպահայ ընտանիքի համար Եարմալոյեանը բնակարան վարձած է Երեւանի մէջ՝ նախապէս վճարելով կէս տարուան վարձքը, հոգացեր է նաեւ սնունդի ու առաջին անհրաժեշտութեան իրերու ծախսը:*

*«Մտածեցինք, որ գան Հայաստան, եթէ բարեկամ չունին, բնականաբար, մենք կը հոգանք սկզբի ծախսերը: Նոյնիսկ ամուսինս կ’ըսէր՝ «չ’երթա՞նք ուտելիք առնենք», ըսի՝ «իրենք կու գան, միասին կ’երթանք, իրենց հետ կ’որոշենք»,- պատմեց Կարինէ Եարմալոյեանը՝ շարունակելով.- «Սկիզբը կը մտածէի, որ կու գան, ինչ պատրաստած եմ ընտանիքիս համար, այդ ալ կ’ուտենք: Բայց յետոյ մտածեցի այսօր տոլմա պատրաստեմ՝ թէ՛ ընտանիքի համար, թէ՛ նոր եկողներուն, որոնց հետ պիտի բարեկամանանք: Կը մտածեմ՝ այդպէս պիտի ըլլայ, որ, եթէ մենք առաջինն ենք Հայաստանի մէջ, որուն անոնք կը տեսնեն: Ճիշդ է, ես շատ շփուող չեմ, բայց, եթէ իրենք իմ կարիքը ունին, հաստատ կը յարաբերինք: Եթէ կ’ուզես քրոջ կամ եղբօր համար, ես իրենց այդպէս կ’ընդունիմ, լաւ բան ընել, օգնել, իրօք շնորհակալութիւնը քիչ մը ծանր է»,- ըսաւ Եարմալոյեանը:*

*Ըստ Սփիւռքի նախարարութեան, արդէն 5 տարի շարունակուող պատերազմին շուրջ 150 հայ զոհուած է, 180-ը՝ վիրաւորուած: Անցեալ երկու շաբաթներուն ընթացքին հայկական համայնքը ութ զոհ ունեցաւ, որոնց կարգին՝ մէկ երեխայ կար:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍԵԱՆՆ Է



Հայաստանի ֆուտբոլի ազգային հաւաքականի մարզչի պաշտօնը Նոյեմբերի 1-ից կ՛ստանձնի Արթուր Պետրոսեանը: Այս մասին յայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պաշտօնական կայքը:

Արթուր Պետրոսեանն այժմ գլխաւորում է շուէյցարական «Ցիւրիխ-2» ակումբը: Նա այս պաշտօնում կը փոխարինի Վարուժան Սուքիասեանին, որը Հոկտեմբերի 13-ին՝ ԱԱ 2018թ.-ի առաջնութեան ընտրական փուլի Լեհաստան-Հայաստան հանդիպումից յետոյ հրաժարականի դիմում էր ներկայացրել:

Վարուժան Սուքիասեանը Հայաստանի ազգային հաւաքականի ղեկը ստանձնել էր 2015թ.-ի Դեկտեմբերի 10-ին: Նրա ղեկավարութեամբ հաւաքականն անցկացրել է 7 հանդիպում, որից 2-ում յաղթել է, 4-ում՝ պարտուել եւ մէկ խաղ աւարտել գոլազուրկ ոչ-ոքի արդիւնքով:

Հաւաքականի մարզչի փոփոխութեան մասին խօսակցութիւնները տարածուեցին յատկապէս Հայաստանի-Ռումինիա ֆուտբոլային խաղից յետոյ, երբ հաւաքականը սեփական հարկի տակ 0:5 հաշւով պարտուեց ռումինացիներին:

Արթուր Պետրոսեանի գլխաւորութեամբ Հայաստանի հաւաքականն իր առաջին հանդիպումը կ՛անցկացնի Նոյեմբերի 11-ին՝ սեփական հարկի տակ հիւրընկալելով Մոնտենեգրոյի ընտրանուն:

## ԴՈՐՏՄՈՒՆԴԻ «ԲՈՐՈՒՍԻԱՅԻ» ՂԵԿԱՎԱՐ. «ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀՆԱՐԱՒՈՐ ՉԷ»

Դորտմունդի «Բորուսիայի» գործադիր տնօրէն Հանս-Եոահիմ Վացկեն բացառել է, որ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն անգլիական «Մանչեսթեր Եունայթըտից» կարող է վերադառնալ գերմանական ակումբ:

«Դա երբեք տեղի չի ունենայ: Իւրաքանչիւր խելացի խաղացող պէտք է մտածի ցանկացած տեղափոխութիւնից առաջ: Երբ դու խաղում ես քո վրայ աշխատող պայմաններում, շատ տարօրինակ է հրաժարուել դրանից: Դորտմունդում հենց այդպէս էր:

Մխիթարեանի դէպքում դա ֆուտպոլիստի որոշումն էր: Հնարաւոր է, որ այդ որոշման մէջ նրան օգնել է Մինօ Ռայոլան: Մինոն խելացի, բայց անզգայ մարդ է»,- Վացկեի խօսքը մէջբերում է Sky Sports-ը:

Յիշեցնենք, որ 27-ամեայ Մխիթարեանին ձեռք բերելու համար Անգլիայի 20-ակի ախոյեանն այս ամրանը 42 միլիոն եւրօ էր վճարել «Բորուսիային»: Գերմանական ակումբը 2013-ին հայ կիսապաշտպանին 27.5 միլիոն եւրոյով էր գնել Դոնեցկի «Շախտյորից»: Անգլիայի ընթացիկ առաջնութիւնում Հենրիխը մեկնարկային կազմում մասնակցել է մէկ խաղի:

## ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ԽԱՂԱՑԵԼ Է ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄՈՒՄ

MLS-ի կանոնաւոր առաջնութեան նախավերջին տուրում «Շիքակօ Ֆայրը» սեփական խաղադաշտում 2:1 հաշւով յաղթել է «Նիւ Ինգլենդ Ռեւոլյուշնին», իսկ «Ռեալ Սոլթ Լեյքը» 0:0 հաշւով է աւարտել «Կանզաս Սիթիի» դէմ տնային խաղը:

«Ռեալ Սոլթ Լեյքի» յարձակուող Եուրա Մովսիսեանը մեկնարկային կազմում խաղացել է 57 րոպէ, իսկ Հայաստանի հաւաքականի թեկնածու Դաւիթ Արշակեանը «Շիքակօ Ֆայրի» կազմում փոխարինման է դուրս եկել 86-րդ րոպէին, երբ հաշիւը 2:1 էր:

## ԳԷՈՐԳ ՂԱԶԱՐԵԱՆԸ ԴՈՒԲԼԻ ՀԵՂԻՆԱԿ Է ԴԱՐՁԵԼ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԳԱՒԱԹՈՒՄ

Ֆուտպոլի Պորտուգալիայի գաւաթի խաղարկութիւնում «Մարիտիմուն» Գէորգ Ղազարեանի դուբլի օգնութեամբ 4:0 հաշւով յաղթել է «Նաւալին» եւ դուրս եկել 1/16 եզրափակիչ:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպանն աչքի է ընկել 72-րդ եւ 78-րդ րոպէներին: Պորտուգալիայի Գաւաթի 1/16 եզրափակիչի զոյգերը կ՛որոշուեն վիճակահանութեցամբ:

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԼԻԳԱՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵԼ

Հիւսիսային Եւրոպայի մի քանի թիմեր քննարկում են առանձին առաջնութիւն հիմնելու խնդիրը: Նման յայտարարութիւն է տարածել դանիական Կոպենհագենի սպորտային տնօրէն Անդրես Հորսհոլտը:

-Դա ճիշտ է: Մենք ցանկանում ենք հենց այս պահից քայլեր ձեռնարկել, քանի որ հզօր թիմերը օրէցօր աւելի են ուժեղանում եւ մեր թիմերի նման թիմերի գոյութիւնը գնալով կարող է աւելի դժուարանալ: Այդ պատճառով էլ մենք ցանկանում ենք այլընտրանքային առաջնութիւն ստեղծել,-Հորսհոլտի խօսքերն է մէջբերում BT պարբերականը:

Տեղեկացւում է նաեւ, որ Կոպեհագենի առաջարկը ընդունուել է հոլանդական Այաքսի, ՊՍՎ Էյնդհովենի եւ Ֆեյենորդի, շուէտական Մալմյոյի եւ նորվեգական Ռուսենբորգի կողմից: Բրիտական The Sun պարբերականն էլ տեղեկացնում է, որ շոտլանդական Սելթիկն ու Ռեյնջերսը նոյնպէս մասնակցում են բանակցութիւններին:

## ՎԼԱԴԻՄԻՐ ԿԼԻՉԿՈՆ ՈՒ ԷՆԹՈՆԻ ՋՈՇՈՒԱՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆԻՆ



Այն բանից յետոյ, երբ աշխարհի նախկին ախոյեան բրիտանացի բռնցքամարտիկ Թայսոն Ֆիւրին հրաժարուեց իր տիտղոսներից, բռնցքամարտի ասոցիացիայի փրոմոութեր Էդի Հարնը յայտարարել է, որ մօտ օրերս պաշտօնապէս հաստատուելու է Վլադիմիր Կլիչկոյի եւ Էնթոնի Ջոշուայի մարտի մասին:

Բռնցքամարտիկները համաձայնել են կռուել WBO եւ WBA գօտիների համար:

Յիշեցնենք, որ անցած տարի Ֆիւրին նուաճել էր այս վարկածներով ախոյեանի կոչումները Կլիչկոյից եւ այս տարուայ Յունիսին պէտք է կայանար նրանց ռեւանշ մարտը, սակայն մի քանի անգամ յետաձգելուց յետոյ Ֆիւրին առողջական խնդիրների պատճառով հրաժարուել էր պաշտպանել տիտղոսները:

Նշենք, որ 27-ամեայ Ջոշուան 17 մարտի է մասնակցել եւ 17 նոկաուտով յաղթանակ տարել: Նա նաեւ Լոնտոնի օլիմպիական խաղերի ախոյեան է:

## ՄԵՍԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՆՇԵՑ ԳՈԼՈՎ, «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ» ՎՍՏԱՀ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Սպանական Պրիմերայի 8-րդ տուրում «Բարսելոնան» սեփական խաղադաշտում 4 անպատասխան գնդակ ուղարկեց «Դեպորտիվոյի» դարպասը:

Առաջին խաղակէսում կատալոնացիները խփեցին 3 կոլ՝ հանելով յաղթողի վերաբերեալ բոլոր հարցերը: Նախ դուբլի հեղինակ դարձաւ պրազիլացի կիսապաշտպան Ռաֆինեան, այնուհետեւ աչքի ընկաւ ուրուգուացի յարձակուող Լուիս Սուարեսը:

55-րդ րոպէին փոխարինման դուրս եկաւ վնասուածքից վերականգնուած Լիոնել Մեսին, որը 3 րոպէ անց հաշիւը դարձրեց 4:0: 65-րդ րոպէին հիւրերը մնացին 10 խաղացողներով, սակայն «Բարսելոնան» չկարողացաւ մեծացնել առաւելութիւնը:

Մեսին խաղադաշտից բացակայում էր Հոկտեմբերի 22-ից, երբ վնասուածք էր ստացել Մադրիդի «Աթլետիկոյի» դէմ խաղում:

«Բարսելոնան» 16 միաւորով բարձրացաւ երկրորդ տեղ եւ մէկ միաւոր է զիջում առաջատար դարձած «Սեւիլիային», որը 3:2 հաշւով յաղթեց «Լուզանեսին»:

## ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸԴՆ ԱՄԵՆԱՇԱՏ ՄԱՐԶԱՇԱՊԻԿ ՎԱՃԱՌԱԾ ԹԻՄՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

2011-ից մինչեւ այսօր Մանչեսթեր Եունայթըդը համարւում է աշխարհի ամենաշատ մարզաշապիկը վաճառած թիմը:

Նշենք, որ վաճառուած են համարւում միայն պաշտօնական խանութներից գնուած մարզաշապիկները: Հետազօտութիւնն անցկացուել է PR-մարկետինգի դոկտոր Պիտեր Ռոլմանի կողմից, ում վիճակագրական տուեալների արդիւնքում պարզուել է, որ Եունայթըդը 1.75 մլն մարզաշապիկ:

Երկրորդ ու երրորդ տեղերն են զբաղեցրել Ռեալ Մադրիդը եւ Բարսելոնան, որոնք վաճառել են համապատասխանաբար 1.65 եւ 1.29 մլն մարզաշապիկ:

## ԻԶԱՊԷԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆԻ ՆՈՐ ԽՏԱՍԱԼԻԿԸ

Շարունակուած էջ 13-էն

Tilson-Thomas-ի, Nikolaus Harnoncourt-ի, Mariss Jansons-ի, Yo Yo Ma-ի, Pinchas Zukerman-ի եւ այլոց հետ:

Պայրագտարեանի ձայնը կը հնչէ Մատանիներու Տիրակալը Lord of the Rings: The Twin Towers ֆիլմին մէջ, (որուն համար ան շահած է Կրէմի մրցանակ) եւ Աթոմ Էկոյեանի Արարատ ֆիլմին մէջ: "Երկար ճանապարհ դէպի տուն" վաւերագրական ժապաւէնը կը պատմէ Հայաստան տուած իր առաջին այցելութեան մասին, իսկ BBC-ի նկարահանած Holocaust- A Music Memorial from Auschwitz ֆիլմին մէջ, Պայրագտարեան Աուշվիցի մէջ կը կատարէ Հրէական Ողջակիզման զոհերուն նուիրուած Henryk Gorecki-ի ստեղծագործութիւնը:

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Երաժշտական գիտութիւնդ քեզ մղած է տարբեր առանձնաշնորհումներու որոնք յաջողութեանդ մեծ սատար կանգնած են: Երիտասարդ մը քեզի պիտի դիմէ խրատի եւ ցուցմունքի համար, եթէ ճարը եւ լուծումը չես գիտեր՝ սխալ տեղեկութիւն մի տար:
Բախտաւոր թիւերդ են: 7,14,17,29,30

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Նոր արկածախնդրութիւններ քեզ յուսադրելով՝ մոռցնել պիտի տան ֆիզիքական ցաւերդ: Անցեալին պատահած տքեղ դէպք մը, կը մղէ քեզ ատելութեամբ վարուելու կարգ մը գործընկերներուդ հետ:
Բախտաւոր թիւերդ են: 1,15,19,23,28

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 20-Յունիս 20
Ինքնաշարժային ճամբորդութիւններ շատ կը սիրես եւ երբէք չես վարանիր երկար պտոյտներ կատարելէ: Երեխայի մը լաւ լուրերով շատ պիտի ուրախանաս եւ յուսադրուիս ընելու այն բաները որոնք երկար ատենէ ձգձգած էիր:
Բախտաւոր թիւերդ են: 8,16,28,31,35

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Արժանի ես յարգանքի եւ սիրոյ՝ բայց սա չի նշանակեր որ միշտ ուշադրութեան կեդրոնի առարկայ պիտի ըլլաս: Գիշերները ուշ մի զբօսնիր որ սպառնալիքներու դիմաց չգտնես դուն քեզ: Դէպի յառաջ նայէ միշտ եւ նոր ծրագիրներ կազմակերպէ:
Բախտաւոր թիւերդ են: 3,15,24,26,33

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Երբ ըմբոստ եւ կամակոր միտումներ կ'ունենաս՝ հետեւանքները շատ անբաղձալի եւ սխալ կ'ըլլան: Նեղութիւններդ բարկութեամբ դիմագրաւելու՝ հանդարտէ ու համբերէ եւ իմաստութեամբ վարուէ շուրջիններուդ հետ:
Բախտաւոր թիւերդ են: 6,19,24,31,32

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Բնութիւնդ է որ ցանկաս արդարութեան՝ սակայն միշտ անիրաւութեան առջեւ կը գտնես դուն քեզ քանի որ վստահութիւնդ դրած ես անկատար մարդոց վրայ: Բարեկամական խոր կապեր հաստատած ես գործընկերոջ մը հետ:
Բախտաւոր թիւերդ են: 2,13,25,31,32

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Երբ շրջապատուած ես սիրելիներով եւ բարեկամներով՝ դուն քեզ զօրաւոր եւ ինքնավստահ կ'զգաս: Օրէնքները խախտել երբէք չես սիրեր որպէսզի տուգանքի չ'ենթարկուիս: Շատ բաներու մէջ դերահաւատ ըլլալուդ՝ կը կորսնցնես:
Բախտաւոր թիւերդ են: 4,13,22,27,34

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Անձի մը հետ յարաբերելէդ յետոյ, նախապատուութիւններդ եւ կեցուածքդ սկսած են փոխուիլ կեանքի նկատմամբ եւ աւելի լաւատես եղած ես: Մի նեղուիր երբ նիւթական նեղութեան մէջ ըլլաս, քանի որ ստացուածքներէդ կախեալ չէ կեանքդ:
Բախտաւոր թիւերդ են: 9,11,23,34,35

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Բնութեան գեղեցկութիւնն ու հանդարտութիւնը շատ կը սիրես եւ կը հրապուրուիս անոնցմով: Սիրտդ մի խստացներ սիրելիիդ կարիքներուն հանդէպ, փորձէ կակուղ եւ կարեկից ըլլալ: Կեանքդ ապրիր որպէս լաւ օրինակ ուրիշներու:
Բախտաւոր թիւերդ են: 14,20,27,29,30

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Առանց տատամսելու որոշումներ կ'առնես եւ կը յաջողիս: Ունեցած գիտութիւնդ կիրարկելու ես գործիդ ծրագիրներուն մէջ: Առողջութիւնդ իր բնական վիճակին հասցնելու համար, պէտք է համբերութեամբ հետեւիս ցուցմունքներուն:
Բախտաւոր թիւերդ են: 1,20,28,31,33

**ՋՐՀՈՍ** Յունուար 20-Փետրուար 18
Չափազանց խոնարհ եւ զգայուն ըլլալուդ՝ իրաւունքներդ կը կորսնցնես: Տօնական օրերը քեզի շատ եռանդ եւ աշխուժութիւն կու տան: Յառաջիկայ ամիսները շատ զբաղ կրնան ըլլալ ծրագրելով եւ նախապատրաստելով ընդունելութիւններ:
Բախտաւոր թիւերդ են: 5,8,22,34,35

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Մարդոց արտաքին երեւոյթներէն եւ վարմունքներէն հետեւցնելով կարծիքներու մի եանգիր: Յատուկ դժուարութիւններ կրնաս ունենալ ապրելու կողակիցիդ հետ, որոնք նկարագրի դերութիւններ կրնան ըլլալ եւ դիւրիւթեամբ փոխուիլ:
Բախտաւոր թիւերդ են: 16,21,25,30,31

## Երեւանեան Հաւաքն Ու Կոռեկտութեան Ջնջուած Սահմանները

Շարունակուած էջ 2-էն

*անդամներն իրենց բարեկամ պետութիւններ են համարում»:*

*Աւելին, անդրադառնալով այն փաստին, որ ՀԱՊԿ պետութիւնների ղեկավարները չեն կարողացել պայմանաւորուել գլխաւոր քարտուղարի պաշտօնում Հայաստանի ներկայացուցչի թեկնածութեան շուրջ, թերթը գրում է. «Երկու ժամ բուռն քննարկումներից յետոյ նախագահները դուրս եկան լրագրողների մօտ առանց արդիւնքների: Գլխաւոր քարտուղարի մասին հարցը որոշուել է հանել այսօրուայ օրակարգից, ցածրաձայն քրթմնջաց Սերժ Սարգսեանը՝ չբացատրելով նման որոշման պատճառները»: Մեկ այլ ռուսաստանեան պարբերական՝ «Կոմերսանտ»-ն էլ այսպէս է «պատկերում». «...Ինչից յետոյ պարոն Սարգսեանը նոյնպէս անհասկանալի ինչ-ոչ բան էր քրթմնջում քթի տակ»:*

*Կոռեկտութիւնից զուրկ ու սանձարձակութեամբ արտայայտուած ռուսաստանեան մամուլի հրապարակումները, պարզ է, որ պատահականութիւն չեն, դրանք թելադրուած են «վերեւից»: Սա պատասխան է, թէ ինչպէս է «մայր Ռուսաստանը» վերաբերւում Հայաստանին ու Երեւանում անցկացուած գագաթնաժողովին:*

*Փաստօրէն, միակ յայտարարութիւնը, որը կարելի է ուշադրաւ համարել, դա Լաւրովի յայտարարութիւնն էր, այն էլ հայկական կողմի համար որոշակիօրէն վտանգներով լի: Հնարաւոր է, որ Ղարաբաղի հարցն ու հայ-թուրքական սահմանի բացումը դառնան Ռուսաստան-Թուրքիա բանակցութիւնների առարկայ:*

*«ՀԱՅԵԼԻ»*

## Տագնապ Կարէն Կարապետեանի Համար

Շարունակուած էջ 2-էն

*որ այդ հանգամանքը որքան էլ կարեւոր, որքան էլ դրական տրամադրող, այդուհանդերձ ամենավճռորոշը չէ նոր կառավարութիւնից սպասումների ձեւաւորման առումով: Վճռորոշը լինելու են քաղաքական գործօնները, համակարգային գործօնները:*

*Հենց այդ առումով, եթէ նրանք, ովքեր հեռացել են կառավարութիւնից եւ զիջել տեղը «տեխնոկրատներին», իրենց տեղը ամուր են պահում ՀՀԿ-ում, ապա գործնականում անհնար է դառնում «տեխնոկրատների» համակարգային արդիւնաւէտութիւնը, որքան էլ նրանք անկեղծօրէն ցանկանան եւ ձգտեն դրան:*

*Ըստ այդմ, տնտեսական իրավիճակ, տնտեսական խաղի կանոն եւ ընդհանրապէս համակարգային միջավայր փոխելու համար Կարէն Կարապետեանը նախ պէտք է փոխի ՀՀԿ-ի «ստատուս-քուոն»: Դա նուազագոյնն է համակարգային փոփոխութիւնների ներքին բաղադրիչի խնդիրը լուծելու տեսանկիւնից:*

*Բայց, կայ իհարկէ արտաքին բաղադրիչի խնդիրը: Միայն ներքին բաղադրիչի հարցի լուծումը կը բերի որոշակի փոփոխութիւնների, որոնք սակայն չեն կարող արտացոլուել ընդհանուր հասարակական-պետական որակների տեսքով: Դրանք կ'արտացոլուեն լոկ բարեկեցութեան ընդհանուր աստիճանի փոփոխութեամբ, ինչը սակայն էական ազդեցութիւն չի թողնի պետական կենսունակութեան եւ որակների առումով, որովհետեւ դրանց համար հրամայական են փոփոխութիւններն արտաքին բաղադրիչի տեսանկիւնից: Որովհետեւ Հայաստանը որպէս պետութիւն չի կարող զարգանալ, քանի դեռ գտնւում է պետական արդիականութիւնից ոչ միայն զուրկ, այլ այդ արդիականութիւնը մարտահրաւէր դիտարկող պետութիւնների միջավայրի ազդեցութեան տակ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Շարունակուած էջ 7-էն

*կու գան մանրամասն յայտարարութեամբ:*

*Սփիւռքի փոխնախարարը անդրադարձաւ նաեւ այն քննադատութեան, թէ ինչու Հայաստանի նախագահի յանձնարարութեամբ անցեալ շաբաթ մարդասիրական օգնութիւնը Սուրիա տեղափոխած օդանաւերը դատարկ վերադարձան Հայաստան. «Բեռնատար ինքնաթիռներով կարող ենք բերել Հայաստան: Եւ մեր աշխատակցին էդ նպատակով գործուղել էինք, վարչութեան պետին: Որեւէ մէկը չէր դիմել նրան: Ի՞նչ կ'ասէք դրան: Նրանք, ովքեր գիտեն էն սիրիահայերը տեղը, որոնք բեռներ տանող ինքնաթիռներով ցանկանում են գալ, թեղն ասէք, վերցնենք բերենք»:*

*Այն դիտարկման, թէ տեղի ազգային իշխանութիւնները տեղեակ չեն եղած, Սրապիոնեան հակադարձեց. «Չի կարող այդպիսի բան լինել: Այնտեղ ազգային իշխանութիւնները համակարգուած են աշխատում, շտապօգնութեան մարմինները համակարգուած են աշխատում»:*

*Կառավարութեան նիստին Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը եւս անդրադարձած է սուրիահայերու խնդիրներուն, սակայն տարհանման անհրաժեշտութեան մասին չէ խօսած: Նիստէն յետոյ լրագրողներու հետ զրոյցին նախարարը պնդեց, որ վիճակը այս պահին Հալէպի մէջ կայուն է:*

*Պաշտօնական տուեալներով, անցեալ 5 տարիներու ընթացքին Հայաստան տեղափոխուած է 20 հազար սուրիահայ, որոնցմէ 17 հազարը մնացած է հայրենիք:*



## ՄԱՀԱԶԴ



*ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆ*
*( 1977-2016)*

*Խոր կսկիծով կը գուժենք անակնկալ մահը մեր սիրեցեալ ամուսնոյն, եղբօր եւ հարազատին՝ ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ անակնկալ մահը որ պատահեցաւ Հինգշաբթի, 13 Հոկտեմբեր, 2016ին, Լաս Վեկասի հիւանդանոցին մէջ:*

*Հանգուցեալի Տան Կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 20 Հոկտեմբեր 2016ին Վէն Նայսի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 7:00-ին:*

*Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 21 Հոկտեմբերի կ.ե. ժամը 1:30-ին Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ մէջ, ապա Թաղումը պիտի կատարուի Հոլիվուտ Հիլզի Ֆորեսթ Լոն գերեզմանատան մէջ:*

*Սգակիրներ՝*
*Այրին Տիկ. Սիւզան Սինանեան եւ զաւակը Սամուէլ*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Արմինէ Սինանեան եւ զաւակները*
*Հօրաքոյրը՝ Տիկ. Սոնա Ասատրեան*
*Մօրաքոյրը՝ Տիկ. Հռիփսիմէ Պարսամեան*
*Տէր եւ Տիկ. Կառլէն եւ Անահիտ Հայրապետեան*
*եւ համայն Սինանեան, Հայրապետեան, Ջիլլինկիրեան, Ասատրեան, Տէր Սահակեան, Սագոյեան, Պէրպէրեան, Սերիմեան, Գարամանուկեան, Տէյիրմէնճեան եւ Աւետիսեան ընտանիքները:*

Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել «Մասիս» շաբաթաթերթին:

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ընկ. ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ անակնկալ մահուան առթիւ, Լաս Վեկասի Ս.Դ.Հ.Կ.ի «Հայկ Բժշկեան» մասնաճիւղի անդամները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին, եղբօր եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ընկ. ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ անակնկալ մահուան տխուր առթիւ Հայ Ամերիկեան Խորհուրդը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ տիկնոջ Սիւզանին, եղբօր Մանուկին եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ընկ. ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ անակնկալ մահուան տխուր առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ տիկնոջ՝ Սիւզանին, եղբօր Մանուկին եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ընկ. ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ վաղհաս մահուան տխուր առթիւ Ս.Դ.Հ.Կ.ի «Կայծ» Երիտասարդական Միութեան անդամները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ տիկնոջ՝ Սիւզանին, եղբօր Մանուկին եւ համայն ընտանեկան պարագաներուն:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններ իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց, որոնք մասնակից եղան իրենց հարազատին՝ հանգուցեալ Զարուհի Բարիքեանի մահուան առթիւ, յուղարկաւորութեան իրենց ներկայութեամբ, այցելութիւններով, հեռաձայներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով:*

*Այս առթիւ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններ 200 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:*

**********

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*Ողբացեալ Զարուհի Բարիքեանի մահուան տխուր առթիւ «Մասիս» շաբաթաթերթին կը նուիրեն՝*
*Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Մարգարեան 200 տոլար*
*Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Նէնսի Մարգարեան 200 տոլար*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Հանգուցեալ ԽԱՉԻԿ ԿԱՐՍԵՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ «Մասիս» իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Մասնաւորաբար Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայրա Սարաֆեաններուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Հանգուցեալ ԽԱՉԻԿ ԿԱՐՍԵՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը իր բոլոր միաւորներուն անունով խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն եւ մասնաւորաբար Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայրա Սարաֆեաններուն:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Հանգուցեալ ԽԱՉԻԿ ԿԱՐՍԵՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Լուիզիանայի Ս.Դ.Հ.Կ.ի «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի վարչութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ մասնաւորաբար Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայրա Սարաֆեաններուն:*

*Առ այդ 200 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Հանգուցեալ ԽԱՉԻԿ ԿԱՐՍԵՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Լուիզիանայէն Տէր եւ Տիկ. ընկ. Վազգէ եւ Հայկօ Գալթաքճեան իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ մասնաւորաբար Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայրա Սարաֆեաններուն:*

*Առ այդ՝ փոխան ծաղկէպսակի 200 տոլար կը նուիրեն «Մասիս Շաբաթաթերթին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Հանգուցեալ ԽԱՉԻԿ ԿԱՐՍԵՎԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ «Մասիս» իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Մասնաւորաբար Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայրա Սարաֆեաններուն:*

## ԴՈԿՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՀՄԱՐԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

*Ջեկուցաբերը մերթ ընդ մերթ, մէջբերումներ կատարեց ներկայացուած գիրքէն, որոնք մեծապէս տպաւորեցին ներկաները:*

*Հաճելի էր ունկնդրել Հայր Թովմասին դասախօսութիւնը, որովհետեւ շնորհիւ իր հմտութեան եւ խօսելաոճին, աւելի եւս լուսաբանուեցանք Ս. Գրիգոր Նարեկացիի սրբակենցաղ եւ միսթիքական կեանքով:*

*Գեղարուեստական յայտագրով զոր պատրաստած էր «Այտընեան» երգչախումբի երկարամեայ ղեկավար՝ մաէսթրօ Կրէկ Սարոյեան, բեմ բարձրացաւ շարականագէտ, համակրելի, համեստ եւ անզուգական ձայնով օժտուած արուեստագէտ՝Վաչէ Հայրապետեանը, որ Նարեկացիէն հրամցուց «Հավուն Հավուն» շարականը, արժանանալով բուռն ծափահարութիւններու:*

*Ապա հանդիսավարը բեմ հրաւիրեց Արժ. Տէր Արշակ Աւագ Քահանայ Խաչատուրեանը, որ իր սրտի խօսքը ուղղէ ներկաներուն:*

*Արժ. Տէր Հայրը նախ շնորհաւորեց Ժողովրդապետ Հայրը եւ եկեղեցւոյ Մշակութային Յանձնախումբը, նմանօրինակ ձեռնարկ մը կազմակերպելու համար: Ան, բարձրաթռիչ հայերէնով իր խօսքին մէջ անդրադարձաւ Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանի կատարած գործին: «Այս գիրքը լուրջ մտաւորականի սիրայօժար եւ տքնաջան աշխատանքի դրոշմը կը կրէ, որուն համար ջերմապէս կը շնորհաւորեմ հեղինակը: Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» հրաշալի գործը, ինչպէս նաեւ սուրբին տարբեր ստեղծագործութիւնները զայն կը նկատեն Հայ Եկեղեցւոյ եւ միջազգային գրականութեան մեծագոյն տիտաններէն մէկը, որուն գործերը թարգմանուած են բազմաթիւ լեզուներու:*

*Դարձեալ բեմ հրաւիրուեցաւ արուեստագէտ Վաչէ Հայրապետեանը եւ Նարեկացիէն երգեց «Սայլն ան իջանէր» հոգեթով շարականը, յուզելով ներկաները:*

*Ապա բեմ բարձրացաւ, Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանի երկարամեայ բարեկամ՝ Մաէսթրօ Կրէկ Սարոյեանը, որ յայտնապէս յուզուած, իր սրտաբուխ խօսքը ուղղեց Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանին: «Սիրելի Դոկտ. Յովհաննէս Ահմարանեանը, տոգորուած Նարեկացիի սիրով, համբերութեամբ եւ յամառ աշխատանքով յաջողած է մատչելի դարձնել Ս, Գրիգոր Նարեկացիին ապրումներու ներաշխարհը: «Դուք, Դոկտ. Յովհաննէս, երկար տարիներէ ի վեր կը ծառայէք հայ մշակոյթին եւ գրականութեան. փաստ՝ ձեր երեսունէ աւելի հրատարակած գիրքերը: Ձեզի կը մաղթեմ առողջութիւն եւ երկար կեանք, որպէսզի նորանոր գիրքերով հարստացնէք հայ գրականութեան անդաստանը», եզրափակեց մաէսթրոն:*

*Վաչէ Հայրապետեան դարձեալ իր գեղեցիկ ձայնով երգեց «Տէր Ողորմեա» յուզիչ շարականը:*

*Ապա բեմ բարձրացաւ Դոկտ. Յովհաննէս Ահմարանեան եւ իր յուզախառն շնորհակալութիւնը յայտնեց ներկաներուն, օրուան յայտագրին իրենց մասնակցութիւնը բերող անձերուն եւ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան Յանձնախումբին, որոնք պատրաստած էին երեկոյին հիւրասիրութիւնը:*

*Հայր Անտոն Նորատունկեանի փակման աղօթքով վերջ գտաւ հանդիսութիւնը, որուն յաջորդեց գինեձօնի արարողութիւնը, մասնակցութեամբ յայտագրին մաս կազմող անձերու:*

*Դոկտ. Յովհաննէս մակագրեց իր գիրքերը, որոնց հասոյթը նուիրեց եկեղեցւոյ:*

GOLDEN STATE BANK

# Introducing Our Special Gold CD

**1.26%** annual percentage yield

**15 months**

**1.51%** annual percentage yield

**25 months**

**Limited Time Offer**
**September 15 – November 15, 2016**

**To open your Certificate of Deposit or for more information please call or email us at goldcd@goldenstatebank.com**

**Head Office**
500 N. Brand Blvd.
23rd Floor
Glendale, CA 91203
Phone: 818.254.1052

**Inland Empire Regional Office**
870 N. Mountain Avenue
Upland, CA 91786
Phone: 909.981.8000

**www.goldenstatebank.com**

FDIC INSURED

Must make a minimum deposit of $ 25,000 to a maximum of $1,000,000 to receive the special rates. The Interest rate will be fixed for the term of the Certificate of Deposit. The offer applies to personal and business accounts. Additional minimum deposits of $2,500 can be made at any time. Any early withdrawal or closure of the Certificate of Deposit, prior to maturity, may result in fees or penalties. Please check with one of our offices for complete terms and conditions.